ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ • ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

ՃԵՄԱՐԱՆ
LYCEUM

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ



ROUND SQUARE

COLEGIO DEL MUNDO • WORLD SCHOOL • ÉCOLE DU MONDE

CIS MEMBER

«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր

Ներառական կրթության քաղաքականություն

2025-2026 ուստարի

Բովանդակություն

1.Ներածություն
1.1 Առաքելություն և տեսլական
1.2 ՄԲ-ի ներառականության փիլիսոփայությունը
1.3 Ազգային և միջազգային համատեքստ
1.4 Նպատակ և գործունեության շրջանակ

2.Փիլիսոփայություն և հիմնավորում
2.1 Ներառականությունը որպես մարդու իրավունք
2.2 Արդարություն
2.3 Բազմազանությունը որպես հարստություն
2.4 Համակողմանի զարգացում
2.5 Համատեղ պատասխանատվություն

3.Քաղաքականության շրջանակը և համապատասխանությունը
3.1 ՄԲ ծրագրերի ստանդարտներ և պրակտիկաներ
3.2 ՄԲ այլ փաստաթղթեր
3.3 ՀՀ օրենսդրություն
3.4 Միջազգային պարտավորություններ
3.5 Համապատասխանությունը ճեմարանի մյուս քաղաքականությունների հետ

4.Հիմնական հասկացություններ
4.1 Ներառական կրթություն
4.2 Ուսումնառության բազմազանություն
4.3 Աջակցություն կարիք ունեցող սովորողներ
4.4 Հարմարեցումներ կազմակերպման և հարմարեցումներ բովանդակային
4.5 Օժտված սովորողներ
4.6 Բազմալեզու սովորողներ
4.7 Սովորողի գործունակություն

5.Ներառական կրթության մեթոդաբանություն
5.1 Ուսումնառության համընդհանուր ձևավորում (UDL)
5.2 Տարբերակված ուսուցում (DI)
5.3 Աջակցության եռաստիճան մոդել (RTI)
5.4 Մշակույթի հանդեպ զգայուն մանկավարժություն
5.5 Տրավմայի մասին իրազեկ լինելու մոտեցում

6.Դերեր և պատասխանատվություններ
6.1 Առաջնորդություն և կառավարում
6.2 Ներառական կրթության համակարգող
6.3 Ուսուցիչներ
6.4 Հոգեբաններ
6.5 Լոգոպեդներ և հատուկ մանկավարժներ

6.6 Խմբի մանկավարժներ
6.7 Ծնողներ և խնամակալներ
6.8 Սովորողներ

7.Հայտնաբերում, ուղղորդում և աջակցություն
7.1 Վաղ հայտնաբերում
7.2 Ընդունելության գործընթացներ
7.3 Ուղղորդման մեխանիզմ
7.4 Գնահատում և պլանավորում (ԱՈՒՊ և ԱՈՒԾ)
7.5 Բազմամասնագիտական համագործակցություն
7.6 Մշտադիտարկում և վերանայում
7.7 Գաղտնիություն և էթիկա

8.Ներառական դասավանդում և ուսումնառություն
8.1 Համընդհանուր աջակցություն (1-ին աստիճան)
8.2 Թիրախային աջակցություն (2-րդ աստիճան)
8.3 Ինտենսիվ աջակցություն (3-րդ աստիճան)
8.4 Համադասավանդում և համագործակցություն
8.5 Բազմալեզու սովորողներ
8.6 Տեխնոլոգիան ներառական կրթության մեջ
8.7 Տեղահանված և միգրանտ սովորողներ

9.Ներառականության սկզբունքների կիրառությունը գնահատման մեջ
9.1 Ուղղորդող սկզբունքներ
9.2 Ներառական գնահատման մոտեցումներ
9.3 ՄԲ հարմարեցումների ապահովում
9.4 Փաստաթղթավորում
9.5 Ակադեմիական ազնվություն
9.6 Կապը այլ քաղաքականությունների հետ

10.Օժտվածություն և հոգեբանական հետազոտությունների լաբորատորիա
10.1 Օժտված սովորողների կրթության փիլիսոփայություն
10.2 Օժտվածության սահմանում
10.3 Ծրագրի նպատակներ
10.4 Հայտնաբերում և ախտորոշում
10.5 Ուսումնառության կազմակերպման մոտեցումներ
10.6 Հոգեբանական հետազոտությունների լաբորատորիայի դեր
10.7 Ուսուցիչների վերապատրաստում և մասնագիտական զարգացում
10.8 Ծնողների ներգրավածություն
10.9 Համադրություն ՄԲ փիլիսոփայության հետ

11.Սովորողների բազմազանություն և մարտահրավերներ
11.1 Բազմազանության կատեգորիաներ
11.2 Ուսումնառության խոչընդոտներ
11.3 Խոչընդոտների հաղթահարման ռազմավարություններ

12.Մասնագիտական զարգացում
12.1 Շարունակական ուսուցում
12.2 Առաջնահերթ ուղղություններ
12.3 Միջդիսցիպլինար համագործակցություն
12.4 Ինքնավերլուծության մոտեցումներ

13.Գործընկերություն և համայնքային ներգրավվածություն
13.1 Ծնողները որպես գործընկերներ
13.2 Ծնողական ակումբ
13.3 Համագործակցություն պետական կառույցների հետ
13.4 Արտաքին գործընկերություններ
13.5 Համայնքային իրազեկում

14.Վերանայում և հասանելիություն
14.1 Վերանայման շրջափուլ
14.2 Պատասխանատվություն
14.3 Հասանելիություն

15.Աղբյուրներ

16.Վերանայման ամփոփագիր

17.Հավելվածներ

Հավելված 1. ՀՀ օրենսդրություն և ներքին քաղաքականությունների քաղվածքներ

Հավելված 2. Բացատրական բառարան

Հավելված 3. Դերերի և պատասխանատվությունների ուղեցույց

Հավելված 4. Ընդունելության սկրինինգային և աջակցության մեխանիզմներ

Հավելված 5. ԱՈՒՊ (SSP) և ԱՈՒԾ (IEP) նմուշներ

Հավելված 6. Հարմարեցումների ցանկ

Հավելված 7. Վերանայման գործընթաց

1. Ներածություն

1.1 Առաքելություն և տեսլական

Շիրակացու ճեմարանի առաքելություն է կերտել իսկական մտավորականներ և քաղաքացիներ, որոնք կրում են ազգային և համամարդկային արժեքներ։ Ճեմարանի տեսլականն է ձևավորել ողջ կյանքում սովորող անհատներ, ովքեր դրսևորում են ակադեմիական գերազանցություն, քննադատական և ստեղծագործական մտածողություն, միջազգային մտածելակերպ և բարոյական պատասխանատվություն։

1.2 ՄԲ-ի ներառականության փիլիսոփայությունը

Միջազգային Բակալավրիատը ներառականությունը սահմանում է որպես «շարունակական գործընթաց, որի նպատակն է բոլորի համար ապահովել ուսումնառության հասանելիություն և մեծացնել բոլոր սովորողների մասնակցությունը՝ բացահայտելով և վերացնելով ուսումնական գործընթացի խոչընդոտները» (IBO, 2020)։ Շիրակացու ճեմարանում ներառականությունը համադպրոցական մշակույթի հիմնասյուներից է. բազմազանությունը դիտվում է որպես բնական երևույթ, իսկ յուրաքանչյուր սովորողի արդար, հավասար և լիարժեք մասնակցությունը՝ անձեռնմխելի արժեք։

1.3 Ազգային և միջազգային համատեքստ

Սույն քաղաքականությունը հիմնված է ազգային և միջազգային այն շրջանակների վրա, որոնք երաշխավորում են ներառական կրթության իրավունքը։

Ազգային մակարդակում այն համահունչ է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, որը երաշխավորում է կրթության հավասար հասանելիություն, ներառյալ՝ հատուկ կրթական պայմանների կարիք ունեցող սովորողների համար։

Միջազգային մակարդակում այն արտացոլում է համաշխարհային ճանաչում ունեցող սկզբունքներն ու պարտավորությունները, որոնք ընդգծում են արդարությունը, բազմազանությունը և հասանելիությունը բոլորի համար։

Այս երկու մակարդակների համադրմամբ՝ Շիրակացու ճեմարանը ապահովում է, որ իր ներառական գործելակերպը լինի օրինաչափ, միջազգային լավագույն փորձով առաջնորդվող և ուսումնական բազմազանությանը արձագանքող։

1.4 Նպատակ և գործունեության շրջանակ

Ներառական կրթության քաղաքականությունն ամրագրում է Ճեմարանի այն պարտավորություններն ու ընթացակարգերը, որոնք ապահովում են յուրաքանչյուր սովորողի համակողմանի զարգացումը և կրթության հավասար հասանելիություն բոլոր սովորողների համար։ Այն վերաբերվում է կրթահամալիրի բոլոր կառույցներին (մանկակրթարան, կրտսեր, միջին և ավագ դպրոցներ) և

ընդգրկում է ողջ դպրոցական համայնքը՝ սովորողներին, աշխատակիցներին, ծնողներին և արտաքին գործընկերներին։

2. Փիլիսոփայություն և հիմնավորում

2.1 Ներառականությունը որպես մարդու իրավունք

Յուրաքանչյուր սովորող ունի կրթության իրավունք, որը իրացվում է նրա արժանապատվությունը ու ինքնությունը հարգող, նրա ներուժի լիարժեք զարգացումը խթանող կրթական միջավայրում։ Ներառական կրթությունը ապահովում է ոչ միայն դասերին սովորողի ներկայություն, այլև իմաստավորված մասնակցություն և կրթական իրական հաջողություն։

2.2 Արդարություն (Equity)

Ճեմարանը հստակ տարանջատում է կրթության մեջ հավասարության և արդարության հասկացությունները։

Հավասարություն — բոլոր սովորողներին տրամադրել նույն ռեսուրսներն ու հնարավորությունները՝ անկախ նրանց անհատական առանձնահատկություններից։

Արդարություն — տարբերակված աջակցություն և հարմարեցումներ, որպեսզի յուրաքանչյուր սովորող ունենա համարժեք և իմաստալից արդյունքներ։

Արդարության սկզբունքը հիմնված է սովորողների մեկնարկային պայմանների տարբերության վրա և սահմանում, որ յուրաքանչյուր սովորող անհրաժեշտության դեպքում պետք է ստանա համապատասխան աջակցություն։ Այս մոտեցումը Շիրակացու ճեմարանում դուրս է գալիս բոլորին միատեսակ վերաբերվելու սահմանափակ ընկալումից՝ ուղղվելով դեպի յուրաքանչյուր սովորողի իրական ուսումնական կարիքների պատշաճ բավարարումը։ Այսպիսով՝ արդարությունն արտահայտվում է ոչ միայն գործընթացում, այլ նաև՝ կրթական արդյունքներին հասանելու հնարավորությունների հավասարությամբ։

2.3 Բազմազանությունը որպես հարստություն

Շիրակացու ճեմարում բազմազանությունը դիտվում է ոչ թե որպես հաղթահարելու ենթակա խնդիր, այլ որպես արժեք, որը հարստացնում է ուսուցման գործընթացը և դպրոցական համայնքի կյանքը։ Բազմազանությունը դիտարկվում է լայնորեն՝ ընդգրկելով մշակութային, լեզվական, ակադեմիական, սոցիալ-հուզական և ֆիզիկական առանձնահատկությունները։

Բազմազանությունը արժեք է, քանի որ՝

- բերում է մտքերի և ընկալումների բազմազանություն ու հարստացնում ուսումնական միջավայրը,

- ամրապնդում է համայնքային կյանքը՝ խթանելով համագործակցություն, ապրումակցում և հարգանք,
- նպաստում է միջմշակութային և անձնային փոխըմբռնման զարգացմանը՝ ձևավորելով աշխարհի քաղաքացիություն,
- ուժեղացնում է ստեղծարարությունն ու մեծացնում խնդիրների լուծման հավանականությունը, քանի որ տարբեր փորձառություններն ու տեսակետները խթանում են նորարար և ստեղծարար մտածողությունը։

Բազմազանությունը որպես հարստություն ընդունելով՝ Ճեմարանը երաշխավորում է, որ յուրաքանչյուր սովորողի եզակի փորձառություններն ու կարողությունները ընկալվեն որպես արժեքավոր ներդրում դպրոցի համայնքային զարգացման և ընդհանուր աճի համար։

2.4 Համակողմանի զարգացում

Շիրակացու Ճեմարանում կրթությունը միտված է ձևավորելու համակողմանի զարգացած անհատ՝ զարգացնելով սովորողի մտավոր հետաքրքրասիրությունը, հուզական կայունությունը, սոցիալական պատասխանատվությունը, արժեքային համակարգը, ինչպես նաև ֆիզիկական բարեկեցությունը՝ առաջնորդվելով ՄԲ սովորողի բնութագրիչներով (IB Learner Profile)։

2.5 Համատեղ պատասխանատվություն

Ճեմարանը ներառականությունը դիտում է որպես համատեղ պատասխանատվություն, որը ստանձնում են բոլորը՝ տնօրենությունը, մանկավարժական առաջնորդությունը, ուսուցիչները, մանկավարժները, աջակցող մասնագետները, ծնողները և սովորողները։

3. Քաղաքականության շրջանակը և համապատասխանությունը

Շիրակացու Ճեմարանի Ներառական կրթության քաղաքականությունը հիմնված է բազմաշերտ շրջանակի վրա, որը ապահովում է համապատասխանություն միջազգային, տեղական և Ճեմարանական մակարդակներում։ Այս շրջանակը սահմանում է ինչպես ներառականության սկզբունքները, այնպես էլ գործնական մոտեցումները, որոնք ուղղորդում են ներառական գործելակերպը Ճեմարանում։

3.1 ՄԲ ծրագրերի ստանդարտներ և պրակտիկաներ

Սույն քաղաքականությունը համահունչ է Միջազգային Բակալավրիատի Ծրագրերի ստանդարտներին և պրակտիկաներին (2020), մասնավորապես՝

0401 — Դպրոցը կիրառում և պարբերաբար վերանայում է հասանելիության և ներառականության քաղաքականությունները։

0402 — Դպրոցը ռեսուրսներ է հատկացնում ներառականությանը աջակցելու համար։

0403 — Դպրոցը ապահովում է ուսուցման և գնահատման արդար հասանելիություն։

0404 — Դասավանդումն ու ուսումնառությունը նախագծվում են ուսումնական բազմազանությանը համապատասխան։

3.2 ՄԲ այլ փաստաթղթեր

Սույն քաղաքականությունը անմիջականորեն հիմնված է հետևյալ ՄԲ փաստաթղթերի վրա, որոնք սահմանում են ներառական կրթության պահանջներն ու ակնկալիքները.

- *Learning Diversity and Inclusion in IB Programmes* (2016, թարմացված՝ 2020)
- *Access and Inclusion Policy* (ներկայիս տարբերակ)
- *Programme Standards and Practices* (2020)
- *Rules and General Regulations* (DP, MYP, PYP)
- *Assessment Principles and Practices*
- *Assessment Procedures* (IBIS)
- *Academic Integrity Policy*
- *Language Policy Guidelines*
- *Learning and Teaching in the IB Programmes*

3.3 Ազգային օրենսդրություն

Ճեմարանը գործում է ՀՀ «Կրթության մասին» օրենքի, «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի (2005 թ., փոփոխություններով) և կառավարության կողմից հաստատված համապատասխան կարգերի ու ուղեցույցների հիման վրա։ Հակասությունների դեպքում առաջնահերթ կիրառվում են ՄԲ սկզբունքները՝ ապահովելով հնարավորինս լիարժեք համապատասխանություն տեղական օրենսդրական կարգավորումներին։

3.4 Միջազգային պարտավորություններ

Քաղաքականությունն առաջնորդվում է նաև համաշխարհային փաստաթղթերով, ներառյալ՝

- UNESCO Salamanca Statement (1994)
- UN Convention on the Rights of Persons with Disabilities (CRPD) (2006)
- UN Convention on the Rights of the Child (1989)
- OECD Equity and Inclusion Guidelines in Education

3.5 Համապատասխանությունը Ճեմարանի մյուս քաղաքականությունների հետ

Ներառական կրթության քաղաքականությունը փոխկապակցված է Ճեմարանի հեղինակային ծրագրի և մյուս քաղաքականությունների հետ.

- Գնահատման քաղաքականություն
- Ակադեմիական ազնվության քաղաքականություն
- Լեզվուների ուսուցման քաղաքականություն
- Ընդունելության քաղաքականություն
- Երեխաների պաշտպանության քաղաքականություն
- Շիրակացու Ճեմարանի «Շնորհալի երեխաների բացահայտման և նրանց կրթության կազմակերպման» կրթական ծրագիր

4. Հիմնական հասկացություններ

Ներառական գործելակերպի հստակ և միասնական իրականացման համար սույն քաղաքականությունը սահմանում է հիմնական հասկացությունների ամբողջություն։ Հասկացությունների սահմանումները չեն դիտարկվում միայն որպես տեխնիկական բառարան. դրանք ներկայացնում են ներառականության և ուսումնական բազմազանության վերաբերյալ Ճեմարանի մոտեցման հիմնարար սկզբունքները։ «Արդարություն», «ուսումնական բազմազանություն», «աջակցության կարիք ունեցող սովորող», «սովորողի գործունակություն» և այլ հասկացությունների հստակեցումը ապահովում է ընդհանուր միասնական լեզու՝ տնօրենության, մանկավարժական առաջնորդության, ուսուցիչների, մանկավարժների, աջակցող մասնագետների, ծնողների և սովորողների միջև։

Այս բաժնում ներկայացված են հիմնական հասկացությունները, որոնց ավելի ընդլայնված և մանրամասն բառարանը տե՛ս Հավելված 2-ում:

4.1 Ներառական կրթություն

Ներառական կրթությունը շարունակական գործընթաց է, որի նպատակն է բացահայտել և վերացնել ուսումնառության խոչընդոտները՝ ապահովելով կրթության հավասար հասանելիություն բոլոր սովորողների համար։ Շիրակացու Ճեմարում ներառականությունը համադպրոցական առաջնորդող սկզբունք է.

բազմազանությունը դիտվում է որպես հարստություն, իսկ յուրաքանչյուր սովորողի արժանապատվությունը, ինքնությունն ու ներուժը անձեռմխելի արժեք։

4.2 Ուսումնական բազմազանություն

Ուսումնական բազմազանությունն ընդգրկում է սովորողների միջև առկա տարբերությունների լայն շրջանակ՝ իմացական, լեզվական, մշակութային, սոցիալական, հուզական և ֆիզիկական։ Շիրակացու ճեմարում բազմազանությունը դիտվում է որպես բնականոն երևույթ։ Այն արժեք է, որը հարստացնում է դպրոցական համայնքը, խթանում ստեղծարարությունը, զարգացնում միջմշակութային և միջանձնային փոխըմբռնում։

4.3 Աջակցության կարիք ունեցող սովորողներ

Աջակցություն կարիք ունեցող սովորողները ուսուցման, ուսումնառության և գնահատման մեջ լիարժեք ներգրավվածության համար ունեն հավելյալ աջակցության կամ հարմարեցումների կարիք։ Ճեմարանում նրանց աջակցությունը կազմակերպվում է ընթացակարգերով՝ ուղղորդման, անհատական աջակցության պլանավորման միջոցով (ԱՈՒՊ, ԱՈՒԾ), ապահովելով արդարություն՝ առանց ակադեմիական սպասելիքների նվազեցման։

4.4 Կազմակերպման հարմարեցումներ և բովանդակային հարմարեցումներ

Կազմակերպման հարմարեցումներ՝ կատարվում են ուսումնառության կազմակերպման ընթացակարգերի փոփոխություններ, (օր.՝ լրացուցիչ ժամանակ, այլընտրանքային պայմաններ)։

Բովանդակային հարմարեցումներ՝ կատարվում են ուսումնառության նյութերի, առաջադրանքների և ակնկալվող արդյունքի փոփոխություն (օր.՝ բովանդակության պարզեցում կամ բարդացում)։

Շիրակացու ճեմարանում՝

- Ներքին գնահատման մեջ կարող են կիրառվել և՛ կազմակերպման և՛ բովանդակային հարմարեցումներ՝ համաձայն ՀՀ համապատասխան կարգերի։
- ՄԲ արտաքին գնահատման մեջ թույլատրելի են միայն կազմակերպման հարմարեցումներ։

4.5 Օժտված սովորողներ

Օժտվածությունը բազմաչափ երևույթ է, որը դուրս է գալիս միայն ուսումնական բարձր առաջադիմության կամ ինտելեկտուալ զարգացման բարձր մակարդակի շրջանակներից։ Այն դրսևորվում է երեք հիմնական բաղադրիչների դինամիկ փոխազդեցությամբ.

Մտավոր բարձր ընդակություններ – սովորողը ցուցաբերում է զգալիորեն ավելի բարձր իմացական ներուժ՝ ընդհանուր ինտելեկտուալ կարողությունների կամ կոնկրետ ոլորտների շրջանակում։

Ստեղծարարություն – սովորողը բնութագրվում է նորարար մտածողությամբ, հետաքրքրասիրությամբ, ճկուն մոտեցումներով, նոր գաղափարներ և լուծումներ ինքնուրույն առաջադրելու կարողությամբ։

Առաջադրանքի նկատմամբ նվիրվածություն – կայուն հետաքրքրվածություն, ներքին մոտիվացիա, բարձր կամային դրսևորումներ և բարդ առաջադրանքները, **որոնք իր հետաքրքրությունների շրջանակում են**, ավարտին հասցնելու ձգտում։

Օժտվածությունը դրսևորվում է այն ժամանակ, երբ այս հատկանիշները միահյուսվում են, և միշտ պայմանավորված է արտաքին միջավայրով, ընձեռված հնարավորություններով և անձնական ջանքերով։

Շիրակացու ճեմարանի ներառական կրթության տեսլականում **օժտված սովորողները դիտարկվում են ոչ թե որպես բացառություն, այլ որպես բնական բազմազանության կատեգորիա** և պահանջում են նպատակաուղղված հայտնաբերում և աջակցություն։ Նրանց զարգացումը խթանվում է **հարստացման (enrichment), արագացման (acceleration), մենթորության** և համակողմանի զարգացման ապահովմամբ՝ միաժամանակ խթանելով ինչպես անհատական աճը, այնպես էլ համայնքային ներդրումը։

4.6 Բազմալեզու սովորողներ

Բազմալեզու սովորողներ են համարվում այն սովորողները, որոնք ուսուցման գործընթացում կիրառում են այն լեզուն, որը նրանց առաջնային հաղորդակցման լեզուն չէ։ Շիրակացու ճեմարանը բազմալեզվությունը դիտարկում է որպես իրականություն և որպես ռեսուրս։ Աջակցությունը կազմակերպվում է լեզվական հենասյուների (scaffolding), երկլեզու ռեսուրսների և տարբերակված գնահատման միջոցով՝ առաջնորդվելով Լեզուների ուսուցման քաղաքականությամբ։

4.7 Սովորողի գործունակություն

Սովորողի գործունակությունը ուսումնառության կազմակերպման համար սովորողի՝ նախաձեռնություն ցուցաբերելու, նպատակներ դնելու, որոշումներ կայացնելու և պատասխանատվություն ստանձնելու կարողությունն է։ Շիրակացու ճեմարում գործունակությունը կարևոր է ինչպես ներառականության, այնպես էլ ՄԲ սովորողի բնութագրիչների համատեքստում. սովորողները իրենց զարգացման ակտիվ մասնակիցներ են, ոչ թե ուսումնառության պասիվ ընդունողներ։

5. Ներառական կրթության մեթոդաբանություն

Շիրակացու ճեմարում ներառական կրթությունը մեկանգամյա կամ առանձնացված գործողություններ չեն. այն ամբողջական մեթոդական մոտեցում է։ Դպրոցը հիմնվում է միջազգային հաստատված մոտեցումների վրա՝ յուրաքանչյուր սովորողի համար իմաստալից ուսուցման և զարգացման հասանելիություն ապահովելու համար։

5.1 Ուսումնառության համընդհանուր ձևավորում (UDL)

Ճեմարանը կիրառում է ՈՒՀՁ սկզբունքները՝ ապահովելով

- ընկալման բազմազան ձևեր (representation),
- արտահայտման և գործողության բազմազան ձևեր (expression/action),
- ներգրավման բազմազան ձևեր (engagement)։

Սա թույլ է տալիս, որ բոլոր սովորողները՝ անկախ նրանց ֆունկցիոնալ վիճակից, լեզվական ծագումից կամ սովորելու ոճից, կարողանան ակտիվորեն մասնակցել դասերին։
Ուսուցիչները նախապես ձևավորում են ճկուն և մատչելի դասավանդման մոտեցումներ՝ նվազեցնելով հետագա անհատական հարմարեցումների անհրաժեշտությունը։

5.2 Տարբերակված ուսուցում (DI)

Տարբերակումը Ճեմարանում.

- կանխատեսված է,
- համակարգված է,
- նախապես պլանավորված է։

Ուսուցիչները տարբերակում են՝

- բովանդակությունը՝ *ինչ է սովորողը սովորում*,
- գործընթացը՝ *ինչպես է նա սովորում*,
- արդյունքը՝ *ինչպես է արտահայտում սովորածը*
- միջավայրը՝ *որտեղ է սովորում։*

Սա հիմնված է սովորողների.
✔ պատրաստականության,
✔ հետաքրքրությունների,
✔ ուսումնական պրոֆիլի վրա։

Մոտեցումը խթանում է արդարությունը և հավասարությունը՝ պահպանելով բարձր ակնկալիքներ բոլոր սովորողների համար։

5.3 Աջակցության եռաստիճան մոդել (RTI)

Ճեմարանը կիրառում է աջակցության եռաստիճան համակարգ՝ տարբեր կարիքներին արձագանքելու համար.

- 1-ին աստիճան - Համընդհանուր աջակցություն
  Բարձրորակ տարբերակված ուսուցում բոլոր սովորողների համար։
- 2-րդ աստիճան - Թիրախային աջակցություն
  Փոքր խմբային կամ կարճաժամկետ միջամտություններ՝ լրացուցիչ աջակցության կարիք ունեցող սովորողների համար։
- 3-րդ աստիճան - Ինտենսիվ անհատական աջակցություն
  Ամբողջական ԱՈՒՊ/ԱՈՒԾ և կայուն հարմարեցումներ՝ անհատական աջակցության կարիք ունեցող սովորողների համար։

Այս մոդելը ապահովում է.

- վաղ հայտնաբերում
- ժամանակին միջամտություն
- մշտադիտարկում:

5.4 Մշակույթի հանդեպ զգայուն մանկավարժություն

Դասավանդումը ընդունում է յուրաքանչյուր սովորողի մշակութային ինքնությունը, իսկ նրանց փորձառությունը՝ որպես դասապրոցեսը հարստացնող ռեսուրս։ Ուսուցիչները ներառում են տարբեր մշակութային տեսանկյուններ, նյութեր և օրինակներ՝

- հաստատելով սովորողների ինքնությունը,
- զարգացնելով միջմշակութային կոմպետենտություն,
- խթանելով փոխադարձ հարգանքը և աշխարհի քաղաքացիությունը։

5.5 Տրավմայի մասին իրազեկ լինելու մոտեցում

Ճեմարանը գիտակցում է, որ տրավման կարող է ազդել ուսումնառության և վարքի վրա։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է՝

- ստեղծել անվտանգ, կանխատեսելի միջավայր,

- նվազեցնել առկա տրիգերները,
- ձևավորել վստահություն և հոգեբանական պաշտպանվածություն,
- խթանել հոգեբանական տոկունություն։

Սոցիալ-հուզական ուսումնառությունը ներառված է ամենօրյա պրակտիկայում, ապահովելով, որ սովորողները իրենց զգան ապահով, հարգված և զարգանալու ունակ՝ նույնիսկ դժվար փորձառությունների պայմաններում։

6. Դերեր և պատասխանատվություններ

Շիրակացու ճեմարում ներառական կրթությունը համատեղ պատասխանատվություն է։ Այն պահանջում է առաջնորդության, ուսուցիչների, մանկավարժների, աջակցող մասնագետների, ծնողների և սովորողների ակտիվ ներգրավվածություն։ Դերերի հստակ բաժանումն ու համագործակցությունը ապահովում են, որ ներառականությունը հետևողականորեն իրականացվի ամբողջ դպրոցում։

6.1 Առաջնորդություն և կառավարում

Դպրոցի տնօրենությունը սահմանում է տեսլականը, բաշխում ռեսուրսները և ապահովում է ներառական կրթության հաշվետվողականությունը։ Ղեկավարները՝

- ներառում են ներառականությունը ռազմավարական պլանավորման մեջ,
- վերահսկում են սույն քաղաքականության իրականացումը,
- հետևում են դրա ազդեցությանը դասավանդման և ուսումնառության վրա,
- ապահովում են համապատասխանություն ՀՀ օրենսդրությանը և ՄԲ ստանդարտներին,
- հաշվետվություն են ներկայացնում լայն դպրոցական համայնքին։

6.2 Ներառական կրթության համակարգող

Ներառական կրթության համակարգողը հանդիսանում է աջակցության բոլոր գործընթացների հիմնական պատասխանատուն և կենտրոնական կապող օղակը։ Նրա պարտականություններն են.

- ուղղորդումների (referrals) և գնահատման գործընթացների համակարգում,
- ԱՈՒՊ/ԱՈՒԾ-ների մշակման և վերանայման համակարգում,
- հարմարեցումների միատեսակության ապահովում,

- ՄԲ գնահատման գործընթացում հարմարեցումների դիմումների պատրաստման և ներկայացման համակարգում,
- կապի ապահովում ուսուցիչների, մանկավարժների, աջակցող մասնագետների, ծնողների և տնօրենության միջև։

6.3 Ուսուցիչներ

Ուսուցիչները ներառականության հիմնական գործակալներն են։ Նրանց դերերն են՝

- դասերն պլանավորել ՈՒՀԶ (UDL) և տարբերակված ուսուցման (DI) սկզբունքներով,
- կիրառել հարմարեցումներն ու աջակցման ռազմավարությունները,
- ձևավորել դասասենյակային միջավայր, որը հարգում է բազմազանությունը և խթանում գործունակությունը,
- արձանագրել միջամտությունները և կիսվել առաջընթացով ծնողների և համակարգողի հետ,
- սերտ համագործակցել մասնագետների և գործընկեր ուսուցիչների հետ։
- Ուսուցիչները պարտավոր են պահպանել բարձր ակնկալիքներ բոլոր սովորողների համար՝ միաժամանակ ապահովելով արդարության սկզբունքը։

6.4 Հոգեբաններ

Հոգեբանները ապահովում են սովորողների հոգեկան առողջության և սոցիալ-հուզական բարեկեցության աջակցություն։ Նրանց հիմնական պարտականություններն են.

- իրականացնել հոգեբանական գնահատում (ուժեղ կողմեր, դժվարություններ, ռիսկեր),
- տրամադրել անհատական ու խմբային խորհրդատվություն,
- իրականացնել կանխարգելիչ և զարգացնող ծրագրեր,
- մասնակցել հարմարեցումների, ԱՈՒՊ/ԱՈՒԾ-ների մշակման և շարունակական մշտադիտարկմանը,
- աջակցել ուսուցիչներին՝ սոցիալ-հուզական և վարքային ռազմավարությունների կիրառման հարցում,
- ապահովել գաղտնիություն և մասնագիտական փաստաթղթավորում։

6.5 Լոգոպեդներ և հատուկ մանկավարժներ

Մասնագիտացված անձնակազմը աջակցում է հատուկ ուսումնական կարիքներ ունեցող սովորողներին՝ ուսուցման խոչընդոտները նվազեցնելու և նրանց մասնակցությունը մեծացնելու նպատակով։

Լոգոպեդներ

- իրականացնում են խոսքի, լեզվի և հաղորդակցման գնահատում և անհատական աշխատանք
- մշակում են անհատական զարգացման ծրագրեր խոսքային և լեզվական ոլորտում,
- խորհրդատվություն են տրամադրում ուսուցիչներին՝ դասարանում հաղորդակցման օժանդակ ռազմավարությունների կիրառման համար,
- աջակցում են գնահատման գործընթացներում՝ կապ ապահովելով լեզվական կարիքների և ուսումնական առաջադրանքների միջև
- մասնակցում են հարմարեցումների և ԱՈՒՊ/ԱՈՒԾ-ների մշակմանը և հետևում դրանց իրականացման արդյունավետությանը։

Հատուկ մանկավարժներ

- կազմակերպում են ուսումնական բովանդակության հարմարեցումներ և վարժությունների տարբերակում,
- տրամադրում են թիրախային ուսուցում՝ անհատապես կամ փոքր խմբերով,
- մասնակցում են համադասավանդմանը և ուսումնական միջավայրի հասանելիության ապահովմանը,
- մասնակցում են հարմարեցումների և ԱՈՒՊ/ԱՈՒԾ-ների մշակմանը և հետևում դրանց իրականացման արդյունավետությանը։

6.6 Խմբի մանկավարժներ

Խմբի մանկավարժները կենտրոնական դերակատարություն ունեն սովորողների անձնային, սոցիալական և հուզական բարեկեցության ապահովման հարցում։ Նրանց դերն է.

- սովորողներին աջակցել ինքնակարգավորման, ինքնակառավարման հմտությունների ձևավորման հարցում,
- ուղեկցել սովորողներին հարմարման փուլերում (նոր միջավայր, դասարան, քննություններ),

- միջնորդել և զարգացնել արդյունավետ հաղորդակցություն սովորողների, ուսուցիչների և ծնողների միջև,
- նպաստել դրական վարքագծի ձևավորմանը և դասարանի առողջ մթնոլորտին,
- համագործակցել հոգեբանների և այլ մասնագետների հետ՝ համատեղ արձագանք ապահովելու համար,
- պահպանել գաղտնիություն և մասնագիտական էթիկա։

6.7 Ծնողներ և խնամակալներ

Ծնողները ներառականության հիմնական գործընկերներն են։ Նրանց պարտականությունը.

- փոխանցել կարևոր տեղեկատվություն երեխայի կարիքների վերաբերյալ,
- տանը խթանել ուսուցման և սոցիալ-հուզական ռազմավարությունները,
- ակտիվ մասնակցել հարմարեցումների և ԱՈւՊ/ԱՈւԾ-ների մշակման և վերանայման գործընթացին,
- մասնակցել Ծնողական ակումբի աշխատանքներին՝ ներառականության, ծնողավարման վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով։

6.8 Սովորողներ

Սովորողները չեն հանդիսանում աջակցության պասիվ շահառուներ։ Նրանք.

- սահմանում են նպատակներ, հետևում են առաջընթացին և պաշտպանում սեփական կարիքները,
- հարգում և գնահատում են հասակակիցների բազմազանությունը,
- պատասխանատվություն են ստանձնում հարմարեցումների և ռազմավարությունների կիրառման համար,
- դրսևորում են գործունակություն՝ ՄԲ սովորողի բնութագրիչներին համահունչ։
- Պատասխանատվությունների աղյուսակը տես Հավելված 3-ում։ Դերերի և պատասխանատվությունների ուղեցույց։

7. Հայտնաբերում, ուղղորդում և աջակցություն

Ներառական կրթությունը պահանջում է սովորողի կարիքների վաղ և համակարգված հայտնաբերում, որին հաջորդում են ուղղորդումը և համակարգված աջակցությունը։

7.1 Հայտնաբերում

Ճեմարանը առաջնահերթություն է տալիս սովորողների բազմազանության դրսևորումների վաղ հայտնաբերմանը։
Ուսուցիչները, մանկավարժները, մասնագետները և ծնողները խրախուսվում են.

- դիտարկել և փաստագրել ուսումնառության դժվարությունների,
- սոցիալ-հուզական խնդիրների,
- բազմալեզու աջակցության կարիքների,
- կամ ընդունակությունների գերազանց դրսևորումները։

Ընդունելության ընթացքում իրականացվող գնահատումը ապահովում է սկզբնական տվյալներ, իսկ դասարանային դիտարկումները և ձևավորող գնահատումը ավելի են հստակեցնում ուսումնական պրոֆիլները։

7.2 Ընդունելության գործընթացներ

Շիրակացու ճեմարանում ընդունելությունը իրականացվում է արդարության և հավասար հնարավորությունների սկզբունքներով։ Ընդունելության նպատակն է ապահովել, որ սովորողը մեկնարկի իրեն համապատասխան պայմաններում։

Ընդունելության գործընթացում գնահատվում է

- ուսուցման լեզվի տիրապետման մակարդակը՝ լեզվական աջակցության անհրաժեշտությունը կանխորոշելու համար,
- ուսումնական մեկնարկային հնարավորությունները՝ ըստ տարիքային պահանջների։
- Հոգեբանական թեստավորում
- ուսումնական տեմպի և մտածողության առանձնահատկությունների նախնական տվյալներ ստանալու,
- օժտվածության հնարավոր ցուցիչների դիտարկման նպատակով։

Թեստավորման արդյունքները չեն հանդիսանում ընդունելության որոշիչ չափանիշ և չեն սահմանափակում սովորողի ընդունվելը։ Դրանք ծառայում են բացառապես ուսումնառության աջակցության հնարավորությունների նախնական գնահատման նպատակին։

7.3 Ուղղորդման մեխանիզմ

Եթե ուսուցիչը, խմբի մանկավարժը, ծնողը, կամ սովորողը մտահոգություն ունի, տվյալ դեպքը ուղղորդվում է ներառականության համակարգողին։

Համակարգողը հրավիրում է բազմամասնագիտական թիմ՝ ներառելով.

- ուսուցիչներ,
- աջակցող մասնագետներ,
- խմբի մանկավարժներ,
- ծնողներ,
- անհրաժեշտության դեպքում՝ սովորողը։

Ուղղորդման գործընթացը ղեկավարվում է.

- գաղտնիության,
- ժամանակին արձագանքի,
- արդարության սկզբունքներով։

7.4 Գնահատում և պլանավորում (ԱՈՒՊ և ԱՈՒԾ)

Ուղղորդման հիման վրա սովորողին կարող են տրամադրվել.

- Անհատական ուսումնական պլան՝երկարաժամկետ, կայուն աջակցություն և զարգացում, ներառյալ օժտված սովորողները,
- Անհատական ուսումնական ծրագիր՝ կարճաժամկետ կամ չափավոր աջակցության կարիքների դեպքում

IEP և SSP փաստաթղթերը սահմանում են.

- Նպատակներ
- ռազմավարություններ և հարմարեցումներ
- պատասխանատու անձնակազմ
- վերանայման ժամկետներ։

Պլանավորումը համագործակցային է և փաստաթղթավորվում է հաշվետվողականության ապահովման նպատակով։

ԱՈՒՊ և ԱՈՒԾ նմուշները տե՛ս Հավելված 5 –ում:

7.5 Բազմամասնագիտական համագործակցություն

Շիրակացու ճեմարանում սովորողի աջակցության համակարգը հիմնված է միասնական և համաձայնեցված աշխատանքի վրա։ Աջակցությունը չի իրականացվում մեկուսացված. այն ձևավորվում է ուսուցիչների, մասնագետների, խմբի մանկավարժների և առաջնորդության սերտ համագործակցությամբ։ Նրանք պարբերաբար քննարկում են սովորողի առաջընթացը, միավորում են դիտարկումները և համադրում գործողությունները՝ ապահովելով աջակցության շարունակականությունն ու արդյունավետությունը ինչպես դասարանում, այնպես էլ դպրոցական կյանքի մյուս իրավիճակներում։

Ծնողները այս գործընթացի անբաժանելի մասն են. նրանց ներգրավվածությունը ամրապնդում է համատեղ պատասխանատվության գաղափարը և ուժեղացնում երեխայի զարգացումը դպրոց–ընտանիք համագործակցության միջոցով։

7.6 Մշտադիտարկում և վերանայում

Աջակցության մշակված պլանները ենթարկվում են շարունակական մշտադիտարկման՝ դասարանային դիտարկումների, ձևավորող գնահատման տվյալների, ինչպես նաև ծնողների և սովորողների հետադարձ կապի հիման վրա։ Այս գործընթացը թույլ է տալիս ժամանակին պարզել առաջընթացի դինամիկան և համապատասխանաբար ճշգրտել միջամտությունները։

Պլանների պաշտոնական վերանայումը կատարվում է ուսումնական տարում առնվազն երկու անգամ։ Եթե սովորողի առաջընթացը քիչ է կամ անկայուն, նախատեսված աջակցությունը ուժեղացվում է և դառնում ավելի թիրախային։ Իսկ այն դեպքերում, երբ սովորողի ներուժն առավել բարձր է գնահատվում, ընդլայնվում են հարստացման և զարգացման լրացուցիչ հնարավորությունները՝ ապահովելով նրա ներուժի լիարժեք առաջընթացը։

7.7 Գաղտնիություն և էթիկա

Հայտնաբերման, ուղղորդման և աջակցության վերաբերյալ հավաքագրվող բոլոր տվյալները պահվում են գաղտնիության պայմաններում։ Տվյալները պահպանվում են անվտանգ միջավայրում և հասանելի են միայն այն աշխատակիցներին, ովքեր իրավասու են մասնագիտական պարտականությունների շրջանակում դրանց հետ աշխատելու։

Ճեմարանը հետևում է Հայաստանի Հանրապետության «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի պահանջներին, ինչպես նաև հոգեբանական, լոգոպեդական և հատուկ մանկավարժական ծառայությունների մասնագիտական էթիկայի կանոններին։ Այս մոտեցումը լիարժեք երաշխավորում է սովորողների և նրանց ընտանիքների արժանապատվության, իրավունքների և անձնական տարածքի պաշտպանությունը։

8. Ներառական ուսուցում և ուսումնառություն

Շիրակացու ճեմարանում ներառական կրթությունը հենված է այն համոզմունքի վրա, որ յուրաքանչյուր սովորող ունի զարգացման և հաջողության ներուժ, երբ վերացվում են ուսումնառության խոչընդոտները և արժևորվում է բազմազանությունը: Դասավանդումը նախագծվում է այնպես, որ յուրաքանչյուր սովորող ունենա լիարժեք հասանելիություն կրթական բովանդակությանը, իրական մասնակցություն ուսումնական գործընթացին և հնարավորություն՝ դառնալու իր ուսումնառության ակտիվ և պատասխանատու մասնակիցը:

8.1 Աջակցության համընդհանուր մակարդակ (Tier 1)

Համընդհանուր աջակցության մոտեցումները կիրառվում են բոլոր սովորողների նկատմամբ՝ յուրաքանչյուր դասարանում: Դրանք ներառում են.

- UDL և DI սկզբունքների հետևողական կիրառում,
- կանխատեսելի և բազմազանությունը հաշվի առնող պլանավորում,
- դասասենյակի վարքագծի կազմակերպում, որը ձևավորում է հարգանքի և համագործակցության մթնոլորտ,
- ձևավորող գնահատման տվյալների հիման վրա ուսուցման շարունակական ճշգրտում:

Այս մոտեցումը ապահովում է, որ ներառականությունն սկսվի ոչ թե միայն հատուկ միջամտություններից, այլ հենց ուսուցման ամենօրյա կազմակերպումից, որը հասանելի և արդյունավետ է բոլոր սովորողների համար:

8.2 Աջակցության թիրախային մակարդակ (Tier 2)

Թիրախային մոտեցումները կիրառվում են այն սովորողների համար, որոնք պահանջում են լրացուցիչ և հիմնականում կարճաժամկետ աջակցություն՝ ակնկալվող ուսումնական արդյունքներին հասնելու համար: Դրանք ներառում են.

- փոքր խմբային կամ թիրախային ուսուցում,
- լեզվական աջակցություն բազմալեզու սովորողների համար,
- սոցիալ-հուզական կարճաժամկետ միջամտություններ՝ հոգեբանների ուղեկցությամբ,
- ժամանակավոր հարմարեցումներ՝ առաջադրանքների ծավալի կամ ժամկետների ճշգրտմամբ:

Թիրախային աջակցությունը կանխում է ուսումնական բացերի խորացումը՝ հնարավորություն տալով ժամանակին արձագանքել առաջացած դժվարություններին և վերականգնել առաջընթացի տեմպը։

8.3 Աջակցության ինտենսիվ մակարդակ (Tier 3)

Ինտենսիվ մոտեցումները նախատեսված են այն սովորողների համար, ովքեր ունեն արտահայտված և երկարաժամկետ աջակցության կարիք։ Աջակցությունը կազմակերպվում է անհատականացված ձևով՝ ներառելով.

- Անհատական աջակցության պլանի մշակում, իրականացում և շարունակական վերանայում,
- կայուն հարմարեցումներ ուսուցման և գնահատման ընթացքում (օրինակ՝ լրացուցիչ ժամանակ, հարմարեցված նյութեր, մասնագիտացված թերապիա),
- մենթորություն, հարստացման և խորացման ծրագրեր՝ ներառյալ օժտված սովորողների համար,
- ծնողների և արտաքին մասնագետների հետ երկարաժամկետ համագործակցություն՝ անհրաժեշտության դեպքում։

Աջակցության 3-րդ մակարդակը ապահովում է, որ բոլոր սովորողները ներառված լինեն կրթական գործընթացում. նույնիսկ բարդ կարիքների առկայության դեպքում նա շարունակում է ստանալ իր ներուժին համապատասխան աջակցություն և մասնակցություն։

8.4 Համադասավանդում և համագործակցություն

Համադասավանդման մոդելներն օգտագործվում են՝ համադրելով դասավանդող ուսուցիչների և մասնագետների մասնագիտական կարողությունները։ Համագործակցությունը ներառում է.

- դասերի համատեղ պլանավորում և իրականացում,
- հոգեբանի և մանկավարժի ներգրավում՝ սոցիալ-հուզական ռազմավարությունների տրամադրման համար,
- լոգոպեդի աջակցություն՝ դասարանային հաղորդակցական հմտությունների զարգացման և լեզվական հասանելիության ապահովման նպատակով։

Համագործակցային այս մոտեցումը ձևավորում է համատեղ պատասխանատվության մշակույթ և ապահովում, որ սովորողի աջակցությունը կազմակերպված լինի ամբողջական, փոխկապակցված և ոչ երբեք մեկուսացված կերպով։

8.5 Բազմալեզու սովորողներ

Շիրակացու ճեմարանը բազմալեզու միջավայրը դիտարկում է որպես կրթական հարստության և մշակութային արժևորման կարևոր աղբյուր։ Աջակցությունը կազմակերպվում է հետևյալ ուղղություններով.

- ուսուցման լեզվի յուրացմանը նպաստող աջակցություն (scaffolding) և լեզվական հենասյուներ,
- բազմալեզու նյութերի, բառարանների և օժանդակ ռեսուրսների տրամադրում,
- տարբերեցված գնահատման մոտեցումներ՝ լեզվական կարիքները հաշվի առնելով,
- միջմշակութային հաղորդակցության և փոխըմբռնման կարողությունների զարգացում։

Այս աջակցությունը նպատակ ունի ապահովել ոչ միայն բովանդակության հասանելիություն, այլ նաև սովորողի աճը որպես բազմալեզու և բազմամշակութային անհատ՝ ընդլայնելով նրա հաղորդակցական և աշխարհայացքի հորիզոնները։

8.6 Տեխնոլոգիան ներառական ուսումնառության մեջ

Տեխնոլոգիան դիտարկվում է որպես կարևոր կրթական ռեսուրս, որը նպաստում է ուսուցման հասանելիությանը, սովորողների ակտիվ մասնակցությանը և ինքնուրույնության զարգացմանը։ Ճեմարանը նպատակային կիրառում է թվային գործիքներ՝ ուսուցման խոչընդոտները նվազեցնելու և ներգրավվածությունը բարձրացնելու համար։

Տեխնոլոգիան ներգրավվում է հավասարակշռված և պատասխանատու կերպով. այն աջակցում է ուսումնառությանը, բայց չի ստեղծում կախվածություն և չի նվազեցնում սովորողի ինքնուրույն ջանքերը։

8.7 Տեղահանված և միգրանտ սովորողներ

Ճեմարանը ճանաչում է փախստական և միգրանտ սովորողների որպես համայնքի լիարժեք անդամներ։ Ապահովվում է.

- առաջնային լեզվական և ինտեգրացիոն աջակցություն,
- խորհրդատվություն և սոցիալ-հուզական աջակցություն,
- միջմշակութային զգայունությամբ միջավայր, որտեղ հարգվում է նրանց ինքնությունն ու փորձառությունը։

Ճեմարանը հավաստում է, որ կրթության իրավունքը հավասարապես պատկանում է բոլոր սովորողներին՝ անկախ կեցության կամ միգրացիոն կարգավիճակից։

9. Ներառականության սկզբունքների կիրառությունը գնահատման մեջ

Շիրակացու ճեմարում գնահատումը ղեկավարվում է արդարության, հավասարության, վավերականության և հուսալիության սկզբունքներով՝ համահունչ դպրոցի Գնահատման քաղաքականությանը և ՄԲ փիլիսոփայությանը։ Ճեմարանը համոզված է, որ գնահատումը ոչ միայն ուսումնառության չափում է, այլ նաև հզոր գործիք՝ յուրաքանչյուր սովորողի ուսուցումը, զարգացումն ու ինքնագնահատականի գործընթացը խթանելու համար։

9.1 Առաջնորդող սկզբունքներ

Հավասարությունն՝ ընդդեմ հավասարաչափության։ Բոլոր սովորողները գնահատվում են նույն բարձր ակնկալիքներով, սակայն՝ անհրաժեշտության դեպքում տարբերակված աջակցությամբ կամ հարմարեցումներով։

Համահունչություն ուսումնական նպատակներին։ Գնահատման արդյունքները արտացոլում են նախատեսված ուսումնառության նպատակները և չեն նվազեցվում հարմարեցումների պատճառով։

Ձևավորող և ամփոփիչ գնահատման հավասարակշռություն։ Գնահատումը ապահովում է շարունակական հետադարձ կապ (ձևավորող) և վստահելի ապացույցներ ձեռքբերումների մասին (ամփոփիչ)։

Թափանցիկություն և ազնվություն։ Չափանիշները, ակնկալիքները և հարմարեցումները հստակ ներկայացվում են սովորողներին և ծնողներին. ակադեմիական ազնվությունը պարտադիր է բոլոր գնահատումներում։

9.2 Ներառական գնահատման մոտեցումներ

Ներառականության ապահովման համար ուսուցիչները.

- պլանավորում են գնահատումները՝ UDL և DI սկզբունքներով,
- թույլ են տալիս տարբեր ուղիներով ներկայացնել յուրացրածը (բանավոր, գրավոր, տեսողական, գործնական),
- աջակցություն (scaffolding) են ապահովում բազմալեզու սովորողների համար՝ համաձայն Լեզվի քաղաքականության,
- ներառում են սոցիալ-հուզական նկատառումներ՝ նվազեցնելու հոգեբանական սթրեսը և խթանելու տոկունությունը։

9.3 ՄԲ հարմարեցումների ապահովում

ՄԲ արտաքին գնահատումների համար Ճեմարանը կիրառում է ՄԲ-ի պաշտոնական հարմարեցումները (IBIS-ի միջոցով հաստատված)։ Հնարավոր հարմարեցումներն են.

- լրացուցիչ ժամանակ,
- առանձին տարածք,
- ընթերցող կամ գրառող տեխնոլոգիաներ և այլն։

Ուշադրություն. ՄԲ արտաքին գնահատումների համար բովանդակային կամ ծրագրային հարմարեցումներ չեն թույլատրվում։

Գնահատման հարմարեցումների ցանկը տե՛ս Հավելված 6-ում։

9.4 Փաստաթղթավորում

Բոլոր հարմարեցումները և աջակցության միջոցառումները պաշտոնապես փաստաթղթավորվում են, որը ապահովում է .

- արդարություն
- հաշվետվողականություն
- համապատասխանություն ՄԲ պահանջներին և ՀՀ կարգավորումներին։

9.5 Ակադեմիական ազնվություն

Ներառական գործելակերպը որևէ կերպ չի նվազեցնում ակադեմիական ազնվության պահանջը։ Հարմարեցումները նախատեսվում են ուսուցման խոչընդոտները վերացնելու համար և չեն իջեցնում ակադեմիական ակնկալիքների մակարդակը։

Բոլոր գնահատումները՝ ձևավորող, ամփոփիչ և արտաքին, իրականացվում են համաձայն Ճեմարանի Գնահատման քաղաքականության և Ակադեմիական ազնվության քաղաքականության՝ ապահովելով արդարություն, թափանցիկություն և հավասար չափանիշներ բոլոր սովորողների համար։

9.6 Կապ այլ քաղաքականությունների հետ

Ներառական կրթության քաղաքականությունում գնահատման մոտեցումները ամբողջովին համադրված են.

Գնահատման քաղաքականության հետ — արդարություն, հուսալիություն, ձևավորող և ամփոփիչ գնահատումների հավասարակշռություն

Ակադեմիական ազնվության քաղաքականության հետ — ազնվություն և իսկություն

Լեզվի քաղաքականության հետ — բազմալեզու սովորողների աջակցություն (scaffolding) և տարբերակում

Ընդունելության քաղաքականությունների հետ — թափանցիկ և արդար գնահատում

Երեխաների պաշտպանության քաղաքականության հետ — արժանապատվության պահպանում և սթրեսի նվազեցում:

10. Օժտվածություն և հոգեբանական հետազոտությունների լաբորատորիա

Շիրակացու ճեմարանը օժտվածությունը համարում է սովորողների բազմազանության անբաժանելի մաս: Օժտված սովորողները չեն դիտարկվում որպես առանձին խմբավորում, այլ որպես սովորողներ, որոնց բարձր մտավոր կարողությունները, ստեղծագործականությունը և ներքին մոտիվացիան բացահայտման և աջակցության կազմակերպման կարիք ունեն: Ճեմարանի Շնորհալի երեխաների բացահայտման, նրանց կրթության կազմակերպման հեղինակային ծրագիրը, որը հաստատված է պետության կողմից, սահմանում է իրականացվող աշխատանքների շրջանակը, որտեղ առանցքային դեր ունի Ճեմարանի Հոգեբանական հետազոտությունների լաբորատորիան:

10.1 Օժտված սովորողների կրթության փիլիսոփայություն

Շիրակացու ճեմարանում օժտվածությունը դիտարկվում է ոչ թե որպես առանձնացված կամ էլիտար մոտեցում, այլ որպես սովորողի ներուժը բացահայտելու և զարգացնելուհնարավորություն՝ հանուն նրա անձնական աճի, ինչպես նաև դպրոցի և հասարակության բարօրության:

Ճեմարանը հաստատում է, որ ներառական կրթությունը ընդգրկում է և՛ այն սովորողներին, ովքեր պահանջում են լրացուցիչ աջակցություն՝ ակնկալված արդյունքներին հասնելու համար, և՛ այն սովորողներին, ովքեր իրենց ունակությունների զարգացման համար հարստացված և ավելի բարձր պահանջներ ունեցող ուսուցման կարիք ունեն:

Այս մոտեցումը ապահովում է, որ յուրաքանչյուր սովորող ստանա իր անհատական ներուժին համապատասխան աճի հնարավորություններ՝ հավասար արժևորմամբ և աջակցությամբ:

10.2 Օժտվածության սահմանում

Ճեմարանի հեղինակային ծրագրի համաձայն օժտվածությունը բազմաչափ երևույթ է, որը ներառում է.

- մտավոր բարձր ընդունակություններ, որոնք չափվում են մշակույթից անկախ մեթոդիկաներով (Raven, Cattell CFIT),

- ստեղծարարության բարձր մակարդակ, որը չափվում է Torrance-ի ստեղծագործական մտածողության թեստով,
- առաջադրանքը ավարտին հասցնելու նվիրվածություն և ներքին մոտիվացիայի բարձր մակարդակ,
- սոցիալ-հուզական առանձնահատկություններ, որոնք բնորոշ են ընդհանուր ինտելեկտուալ օժտվածություն ունեցող սովորողներին:

Տեսական հիմքում կիրառվում է Ջ.Ռենցուլլիի եռաբաղադրիչ մոդելը, որը համալրվում է ազգային և միջազգային գիտական և նորարար հետազոտություններով:

10.3 Ծրագրի նպատակներ

Ծրագրի հիմնական նպատակներն են.

- օժտված սովորողների վաղ և հուսալի բացահայտում,
- անհատական մոտեցումների մշակում,
- իմացական, ստեղծագործական, սոցիալական և հուզական զարգացման խթանում,
- օժտվածության վերաբերյալ հետազոտությունների կիրառում դասավանդման մեջ,
- սովորողների ներուժի իրացում՝ սեփական տաղանդները հանրային արժեք ստեղծելու գործում ներդնելու նախաձեռնողականություն:

10.4 Հայտնաբերում և ախտորոշում

Օժտված սովորողների հայտնաբերումը համակարգված և քայլերի հաջորդականություն ունեցող գործընթաց է, որի ընթացքում հավաքագրվում են տվյալներ մի քանի աղբյուրներից.

- ընդունելության տվյալներ՝ Raven/Cattell CFIT սկզբնական սկրինինգ,
- հոգեբանի, մանկավարժի, ուսուցիչների դիտարկումներ,
- ստեղծարարության գնահատում՝ Torrance,
- Մտավոր ընդունակությունների ավելի խորքային հետազոտություն՝ Wechsler
- ուսուցիչների հարցարաններ
- ծնողական հարցարաններ:

10.5 Ուսումնառության կազմակերպման մոտեցումներ

Օժտված սովորողների համար հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակվում են անատական մոտեցումներ, իսկ նրանց ուսումնառության կազմակերպումը իրականանում է հետևյալ հիմնական սկզբունքների հիման վրա.

հարստացում — ուսուցման խորություն և բարդություն,

արագացում — առաջընթաց առանձին առարկաներում կամ դասարանային մակարդակով,

մենթորություն — կապ ոլորտի մասնագետների հետ։

10.6 Հոգեբանական լաբորատորիայի դերը

Հոգեբանական լաբորատորիան օժտվածության ծրագրի իրականացման հիմնասյուներից է.

- իրականացնում է ստանդարտացված հոգեախտորոշում և հոգեբանական գնահատում,
- հետազոտում է սովորողների զարգացումը իմացական, հուզական և սոցիալական չափանիշներով,
- տեղայնացնում է նորարար մանկավարժական մոտեցումներ,
- վերապատրաստում է ուսուցիչներին օժտվածության ճանաչման և աջակցության ուղղությամբ։

10.7 Ուսուցիչների վերապատրաստում և մասնագիտական զարգացում

Ուսուցիչները վերապատրաստվում են՝

- օժտված սովորողների համար տարբերակված ուսուցում ապահովելու,
- հարստացման առաջադրանքներ մշակելու,
- հոգեբանական աջակցություն ցուցաբերելու,
- ՄԲ փիլիսոփայության տրամաբանությամբ ներառականություն ապահովելու համար։

10.8 Ծնողների ներգրավածություն

Ծնողները համարվում են կարևոր գործընկերներ։ Նրանք՝

- տրամադրում են տեղեկություն երեխայի ուժեղ կողմերի և հետաքրքրությունների մասին,

- մասնակցում են անհատական մոտեցումների մշակման և վերանայման գործընթացին,
- մասնակցում են քննարկումներին՝ օժտված սովորողների կարիքները հասկանալու և աջակցող միջավայր ձևավորելու նպատակով։

10.9 Համադրություն ՄԲ փիլիսոփայության հետ

Օժտվածության ծրագիրը ամբողջությամբ համահունչ է ՄԲ այն մոտեցմանը, ըստ որի բազմազանությունը նորմա է։ Օժտված սովորողները չեն առանձնացվում դպրոցական համայնքից. նրանց ներուժը բացահայտվում և զարգացվում է հարստացնող լրացուցիչ ուղիների միջոցով։

11. Սովորողների բազմազանություն ու մարտահրավերներ

Շիրակացու ճեմարանը համարում է, որ սովորողների բազմազանությունը բազմաչափ է, և որ ուսման ընթացքում դժվարությունների ի հայտ գալը բնական գործընթաց է։ Ներառական կրթությունը ենթադրում է այս դժվարությունների ճանաչումն ու ընդունումը, ինչպես նաև նախաձեռնող արձագանքը ապահովում են, որ բոլոր սովորողներն ունենան աջակցություն՝ նշանակալից արդյունքների հասնելու։

11.1 Բազմազանության կատեգորիաներ

Սովորողների բազմազանությունը կարող է արտահայտվել մի շարք ոլորտներում.

- Իմացական բազմազանություն — ինտելեկտուալ կարողությունների, ուսումնառության տեմպի և խնդիրների լուծման մոտեցումների տարբերություններ։
- Լեզվական բազմազանություն — ուսուցում ոչ մայրենի լեզվով, երկլեզու և բազմալեզու պրոֆիլներ։
- Մշակութային բազմազանություն — ավանդույթների, արժեքների և աշխարհայացքների տարբերություններ։
- Սոցիալ-հուզական բազմազանություն — ինքնակարգավորման, տոկունության, մոտիվացիայի և միջանձնային հմտությունների տարբեր մակարդակներ։
- Ֆիզիկական բազմազանություն — շարժունակության, զգացողական կամ առողջական վիճակներ, որոնք ազդում են մասնակցության վրա։

11.2 Ուսումնառության խոչընդոտներ

Թեպետ բազմազանությունը ուժ է, սակայն սովորողները կարող են բախվել խոչընդոտների, որոնք սահմանափակում են նրանց մասնակցությունը և հասանելիությունը նրանց համար.

- ուսուցման ոչ ճկուն մոտեցումներ, որոնք չեն կանխատեսում կարիքների բազմազանությունը,
- լեզվական խոչընդոտներ՝ բազմալեզու կամ միգրանտ սովորողների համար,
- սոցիալ-տնտեսական պայմաններ, որոնք սահմանափակում են ռեսուրսների հասանելիությունը,
- հուզական կամ հոգեբանական դժվարություններ՝ ներառյալ տրավմա կամ սթրես,
- բացասական վերաբերմունք, կարծրատիպեր կամ ցածր ակնկալիքներ։

Խոչընդոտների նույնականացումը դրանց վերացման առաջին քայլն է՝ ապահովելով հավասարությունը։

11.3 Խոչընդոտների հաղթահարման ռազմավարություններ

Ճեմարանը կիրառում է մի շարք միջոցառումներ՝ խոչընդոտների վերացման համար.

- մեթոդական և մանկավարժական մոտեցումներ — UDL, DI, RTI, մշակութային զգայուն մոտեցումներ,
- հարմարեցումներ և աջակցություն — ապահովելով հասանելիություն ուսուցման և գնահատման գործընթացներում,
- սոցիալ-հուզական աջակցություն — խորհրդատվություն, մենթորություն և ուսուցչի ուղղորդում,
- համագործակցություն ծնողների և արտաքին մասնագետների հետ — արտադասարանային աջակցություն,
- իրազեկվածության բարձրացում և վերապատրաստումներ — կողմնակալության նվազեցում, ուսուցչական կարողությունների զարգացում։

12. Մասնագիտական զարգացում

Ներառական կրթության իրականացումն հնարավոր է միայն ուսուցիչների ու անձնակազմի շարունակական մասնագիտական աճի պարագայում: Շիրակացու ճեմարանը մասնագիտական զարգացումը դիտարկում է որպես ռազմավարական առաջնահերթություն՝ ապահովելով, որ բոլոր աշխատակիցներն ունենան

ինքնավստահություն, անհրաժեշտ հմտություններ և ստեղծարար մոտեցումներ՝ սովորողների բազմազանությանը պատշաճ արձագանքելու համար։

12.1 Շարունակական վերապատրաստում

Մասնագիտական զարգացումը ներառված է դպրոցի գործունեության տարեկան շրջափուլում։ Ուսուցիչները, մասնագետները և առաջնորդները մասնակցում են.

- սեմինարների, թրեյնինգների և վերապատրաստումների ներառական կրթության վերաբերյալ,
- ՄԲ-ի կողմից ճանաչված մասնագիտական զարգացման դասընթացների,
- ներդպրոցական մասնագիտական համայնքների քննարկումներին, որտեղ գործընկերները կիսվում են ռազմավարություններով և քննարկում ծագած մարտահրավերները։

Այս համակարգը ապահովում է, որ ներառականությունը ոչ թե լինի մեկանգամյա նախաձեռնություն, այլ դպրոցի մասնագիտական մշակույթի կայուն բաղադրիչ։

12.2 Առաջնահերթ ոլորտներ

Վերապատրաստման թեմաները արտացոլում են ՄԲ փիլիսոփայությունն ու ճեմարանի համայնքի կարիքները։ Դրանք ներառում են.

- UDL և DI — ուսուցման համընդհանուր ձևավորում և տարբերակված ուսուցում,
- RTI — աջակցության եռաստիճան համակարգ,
- մշակույթի հանդեպ զգայուն մանկավարժություն և բազմալեզու կրթություն,
- գնահատման հարմարեցումներ և արդարություն,
- սոցիալ-հուզական ուսումնառություն և տրավմայի ճանաչմամբ մոտեցումներ,
- օժտված սովորողների կրթություն՝ հարստացում, արագացում և մենթորություն,
- երեխաների պաշտպանություն, գաղտնիություն և մասնագիտական էթիկա։

12.3 Միջդիսցիպլինար համագործակցություն

Մասնագիտական զարգացումը խթանում է միջդիսցիպլինար համագործակցությունը։
Ուսուցիչները, հոգեբանները, խմբի մանկավարժները, լոգոպեդներն ու հատուկ մանկավարժները խրախուսվում են.

- համատեղ պլանավորել և իրականացնել ուսուցումը,
- փոխանակել մասնագիտական փորձառություն՝ աջակցելով տարբեր սովորողներին։

Այս մոտեցումը ամրապնդում է համատեղ պատասխանատվության մշակույթը։

12.4 Ինքնավերլուծության մոտեցումներ

Ներառականության կրթության կազմակերպումը բարելավվում է, երբ ուսուցիչները կարողանում են քննադատորեն անդրադառնալ սեփական փորձառությանը։ Ճեմարանը խրախուսում է ինքնաանդրադարձի մշակույթը.

- Ինքնաանդրադարձի հարցարաններ (տե՛ս Հավելված 7),
- համագործակցային քննարկումներ և հետադարձ կապ,
- ուսուցիչների և աջակցող մասնագետների համատեղ գործողություններ՝ հետազոտություններ, նախագծեր
- մասնագիտական երկխոսություններ՝ ինչպես ներամբիոնային, այնպես էլ համադպրոցական։
- Ինքնավերլուծության մոտեցումները ապահովում են, որ ներառական կրթությանն ուղղված միջոցառումները լինեն՝
- ապացույցների վրա հիմնված
- համատեքստին համապատասխան
- շարունակաբար կատարելագործվող։

13. Գործընկերություններ և համայնքային ներգրավվածություն

Ներառական կրթությունը համարվում է կայացած ոչ միայն դասասենյակում իրականացվող աշխատանքի շնորհիվ, այլ նաև ընտանիքների, տեղական համայնքի և արտաքին կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության միջոցով։ Շիրակացու ճեմարանը ներառականությունը դիտում է որպես համատեղ իրականացվող հասարակական առաքելություն և ձևավորում է կայուն գործընկերային ցանցեր՝ այդ առաքելությունը ամրապնդելու նպատակով։

13.1 Ծնողները՝ որպես գործընկերներ

Ծնողները դիտարկվում են որպես ուսումնական գործընթացի առաջնային շահառուներ։ Նրանք՝

- տրամադրում են երեխայի մասին ելակետային կարևոր տեղեկատվություն,

- մասնակցում են հարմարեցումների ԱՈՒՊ/ԱՈՒԾ-ների մշակման և վերանայման գործընթացին,
- տանը շարունակում և ամրապնդում են ներառական ռազմավարությունները,
- մասնակցում են պարբերական հանդիպումներին և հետադարձ կապի քննարկումներին:

Ճեմարանը ապահովում է, որ ծնողները մշտապես լինեն տեղեկացված, ներգրավված և իրացվի նրան՝ ներառական պրակտիկային նպաստելու իրավունքը:

13.2 Ծնողական ակումբ

Շիրակացու ճեմարանը կազմակերպում է Ծնողական ակումբի հանդիպումներ, սեմինարներ և աշխատարաններ՝ ներառականության, օժտված սովորողների կրթության, բազմալեզվության և երեխաների սոցիալ-հուզական զարգացման վերաբերյալ ծնողական իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: Այս հանդիպումները ծնողներին տրամադրում են գործիքներ՝ ուսուցմանն աջակցելու և ընտանեկան միջավայրը դպրոցական փիլիսոփայությանը համահունչ դարձնելու համար:

13.3 Համագործակցություն պետական կառույցների հետ

Ճեմարանը համագործակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և այլ տեղական կառույցների հետ՝

- ապահովելու իրավական և ընթացակարգային պահանջներին համապատասխանությունը,
- մասնակցելու ներառական կրթության քաղաքականությունների քննարկմանը,
- այլ կրթական հաստատություններում լավագույն փորձը տարածելու համար:

13.4 Արտաքին գործընկերություններ

Ճեմարանը համագործակցում է համալսարանների, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ՝

- հոգեբանության, հատուկ կրթության և օժտվածության ոլորտում փորձագիտական ներուժը օգտագործելու,
- սովորողների համար մենթորության և պրակտիկայի հնարավորություններ ստեղծելու,

- ներառականության թեմայով համատեղ նախագծերի և հետազոտությունների մասնակցելու,
- աշխատակազմի մասնագիտական զարգացումը խթանելու համար։

Այս համագործակցություններն ընդլայնում են դպրոցի համայնքին հասանելի աջակցության որակն ու ծավալը։

13.5 Համայնքային իրազեկում

Ճեմարանը դպրոցից դուրս ևս խթանում է ներառականության գաղափարը՝ որպես հասարակության հիմնարար արժեք։
Այն իրականացնում է.

- գիտաժողովների, հանրային քննարկումների և մեդիա գործունեության կազմակերպում,
- հետազոտությունների հրապարակում,
- սովորողների ներգրավում համայնքային ծառայության և միջմշակութային նախագծերում։

Այս աշխատանքը ձևավորում է հասարակական պատասխանատվություն և խթանում է արդարության, հավասարության և բազմազանության ընկալումը կրթության մեջ։

14. Վերանայում և հասանելիություն

14.1 Վերանայման շրջափուլ

Սույն քաղաքականությունը ենթակա է շարունակական վերանայման և կատարելագործման։
Պաշտոնական վերանայումը իրականացվում է.

- տարին մեկ անգամ պարբերականությամբ՝ ճեմարանի ռազմավարական պլանավորմանը համահունչ
- ՄԲ գնահատման շրջափուլին պատրաստվելու նպատակով։

Միջանկյալ փոփոխություններ կարող են իրականացվել այն դեպքերում, երբ փոխվում են՝

- ՄԲ պահանջները
- ՀՀ կրթական օրենսդրական դրույթները

14.2 Պատասխանատվություն

Ներառականության համակարգողը մշտադիտարկում է քաղաքականության առօրյա կիրառումը և հավաքում է տվյալներ դրա իրականացման վերաբերյալ։

Տնօրենությունը ապահովում է համակարգված վերահսկում, տրամադրում է անհրաժեշտ ռեսուրսներ և հաստատում է փոփոխությունները։

Ուսուցիչների, մանկավարժների, մասնագետների, ծնողների և սովորողների կարծիքները հաշվի են առնվում հետադարձ կապի մեխանիզմների միջոցով, ապահովելով, որ վերանայման գործընթացը արտացոլի բոլոր շահառուների տեսակետները։

14.3 Հասանելիություն

Ներառական կրթության քաղաքականությունը հասանելի է դպրոցական համայնքի բոլոր անդամների համար.

- Աշխատակազմ — հասանելի է ներքին հարթակով և ներկայացվում է մասնագիտական զարգացման սեմիներների, աշխատարանների ընթացքում
- Ծնողներ — տրամադրվում է իրազեկող միջոցառումների ընթացքում և հրապարակվում դպրոցական կայքում
- Սովորողներ — ներկայացվում է տարիքին համապատասխան ձևաչափով՝ մանկավարժի, հոգեբանի ժամին դասարանային քննարկումների միջոցով։

Պարզ և մատչելի ներկայացումն ապահովում է, որ քաղաքականությունը լինի ոչ թե զուտ գրված փաստաթուղթ, այլ գործնական ուղեցույց՝ ամենօրյա կիրառության համար։

Տե՛ս Հավելված 7՝ Իրականացման և վերանայման գործիքներ

15. Աղբյուրներ

Միջազգային աղբյուրներ

- International Baccalaureate Organization (IBO). (2016, թարմացվել է 2020թ.). *Learning Diversity and Inclusion in IB Programmes*. Cardiff, UK: IBO.
- International Baccalaureate Organization (IBO). (2020). *Programme Standards and Practices*. Cardiff, UK: IBO.
- International Baccalaureate Organization (IBO). (2020). *Access and Inclusion Policy*. Cardiff, UK: IBO.
- International Baccalaureate Organization (IBO). (2020). *Assessment Principles and Practices*. Cardiff, UK: IBO.

- International Baccalaureate Organization (IBO). (2020). *Academic Integrity Policy*. Cardiff, UK: IBO.
- UNESCO. (1994). *The Salamanca Statement and Framework for Action on Special Needs Education*. Paris: UNESCO.
- United Nations. (2006). *Convention on the Rights of Persons with Disabilities (CRPD)*. New York: UN.
- United Nations. (1989). *Convention on the Rights of the Child (CRC)*. New York: UN.
- OECD. (2012). *Equity and Quality in Education: Supporting Disadvantaged Students and Schools*. Paris: OECD.
- OECD. (2017). *The OECD Handbook for Innovative Learning Environments*. Paris: OECD.

Տեղական աղբյուրներ

- Հայաստանի Հանրապետություն. (2005, փոփոխություններով). *Հատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց կրթության մասին օրենք*. Երևան: ՀՀ Ազգային ժողով:
- Հայաստանի Հանրապետություն. (1999, փոփոխություններով). *Կրթության մասին օրենք*. Երևան: ՀՀ Ազգային ժողով:
- Հայաստանի Հանրապետություն. (2015). *Անձնական տվյալների պաշտպանության մասին օրենք*. Երևան: ՀՀ Ազգային ժողով:
- ՀՀ ԿԳՄՍՆ. (տարբեր տարիներ). *Ներառական կրթության և հարմարեցումների վերաբերյալ որոշումներ և ուղեցույցներ*. Երևան: ՀՀ ԿԳՄՍՆ:

Ներդպրոցական փաստաթղթեր և ծրագրեր

- Շիրակացու ճեմարան. (2025). *Գնահատման քաղաքականություն*
- Շիրակացու ճեմարան. (2025). *Ակադեմիական ազնվության քաղաքականություն*
- Շիրակացու ճեմարան. (2025). *Լեզվի քաղաքականություն*
- Շիրակացու ճեմարան. (2025). *Ընդունելության քաղաքականություններ (կրտսեր, միջին/ավագ դպրոց, ԴԾ)*
- Շիրակացու ճեմարան. (2025). *Երեխայի պաշտպանության քաղաքականություն*

- Շիրակացու ճեմարան. (2015). *Շնորհալի (Օժտված) երեխաների բացահայտման, նրանց կրթության կազմակերպման հեղինակային ծրագիր*
- Շիրակացու ճեմարան. (2025). *Ներառական կրթության քաղաքականություն (սույն փաստաթուղթ)*

Աջակցող գործիքների մասին նշում

Քաղաքականությունը վերանայող խումբն արձանագրում է, որ օգտագործվել են արհեստական բանականության գործիքներ, օրինակ՝ ChatGPT (OpenAI՝ լեզվական մշակման, հստակեցման և ոճային ճշգրտությունն ապահովելու նպատակով։

Սույն փաստաթղթի բովանդակությանն առնչվող որոշումները ամբողջությամբ կայացվել են ճեմարանի մանկավարժական առաջնորդության կողմից։

16. Վերանայման ամփոփագիր

Ներառական կրթության քաղաքականությունը կենդանի փաստաթուղթ է, որը ենթակա է տարեկան վերանայման և շարունակական կատարելագործման։ Յուրաքանչյուր փոփոխություն արտահայտում է ճեմարանի՝

- ՄԲ ծրագրերի ստանդարտներին և պահանջներին համահունչ մնալու,
- ՀՀ օրենսդրական պահանջները ինտեգրելու,
- դպրոցական համայնքի բազմազան և փոփոխվող կարիքներին արձագանքելու հանձնառությունը։
- Վերանայման գործընթացում ներգրավված են.
- մանկավարժական առաջնորդությունը,
- ներառական կրթության համակարգողը,
- ծրագրերի համակարգողները,
- ուսուցիչներ, մանկավարժները և մասնագետներ,
- ինչպես նաև հավաքագրվում են հետադարձ կապ՝ հարցումների, աշխատանքային խմբերի, համադպրոցական քննարկումների միջոցով։

Վերանայումների աղյուսակ

Տարբերակ	Հաստատման ամսաթիվ	Վերանայված է	Ընդհանուր փոփոխություններ / Նշումներ

Տարբերակ	Հաստատման ամսաթիվ	Վերանայված է	Ընդհանուր փոփոխություններ / Նշումներ
v1.0	2020	Տնօրենություն, ՄԲ համակարգողներ, ներառականության աշխատանքային խումբ	Ներառական կրթության քաղաքականության նախնական տարբերակ՝ համահունչ ՄԲ թարմացված ստանդարտներին (2020)։ Ստեղծվեց ամբողջ դպրոցն ընդգրկող շրջանակ (Կրտսերից մինչև Ավագ դպրոց)։
v2.0	2021	Ներառական կրթության համակարգող, մանկավարժական առաջնորդություն	Ուժեղացվեցին աջակցող ծառայությունները՝ հատուկ մանկավարժների ներգրավմամբ։ Թարմացվեցին ուղղորդման և մոնիթորինգի մեխանիզմները։ Լոգոպեդական ծառայության ընթացակարգերի թարմացում։
v3.0	2022	Ներառականության համակարգող, Կրտսեր/Միջին/Ավագ դպրոցների մանկավարժական առաջնորդություններ	Պրոցեսների քարտեզագրում դպրոցական բոլոր փուլերում։ Հստակեցվեցին տեղեկության փոխանցման և դեպքերի համակարգված վարման ընթացակարգերը։
v4.0	2023	Դպրոցների տնօրեններ, ծրագրերի համակարգողներ	Քաղաքականությունների համապատասխանեցում (Գնահատման, Ակադեմիական ազնվության, Լեզուների, Երեխայի պաշտպանության)։ Ուժեղացվեց ներառականության դերը՝ որպես համադպրոցական միավորող հիմք։
v5.0	2024	Ներառականության համակարգող, ղեկավար թիմ, ուսուցիչներ, մասնագետներ	UDL-ի ներդրում դասավանդման և գնահատման ամբողջ համակարգում։ Մեկնարկեց Բացատրական բառարանի (Հավելված 2), մշակման աշխատանքները՝ համարընդհանուր լեզու և նույնական հասկացում ապահովելու համար։
v6.0	Սեպտեմբեր 2025	Տնօրենություն, Մանկավարժական առաջնորդություն,	Համապարփակ վերանայում CIS/IB հավաստագրման/գնահատման համար։ Բարելավվեցին մշտադիտարկման գործիքները

Տարբերակ	Հաստատման ամսաթիվ	Վերանայված է	Ընդհանուր փոփոխություններ / Նշումներ
		ներառական կրթության համակարգող, մասնագետներ, ուսուցիչներ, մանկավարժներ	(Հավելված 7), խստացվեցին հաշվետվողականության մեխանիզմները։ Թարմացվեց՝ հաշվի առնելով արդարության, բազմազանության և ներառականության ռազմավարական առաջնահերթությունները։

17. Հավելվածներ

Հավելված 1. Իրավական հիմքեր

Սույն հավելվածը ներառում է ներառական կրթության քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական հղումներ, միջազգային ուղենիշներ և ներքին կարգավորումներ։

1.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրություն

ՀՀ «Առանձնահատուկ կրթական պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքը (2005 թ., փոփոխություններով)
Պարզաբանում է այն դեպքերը, երբ սովորողը իրավունք ունի ստանալու կրթություն հատուկ պայմաններում և համապատասխան աջակցությամբ։

ՀՀ «Կրթության մասին» օրենքը (1999 թ., փոփոխություններով)
Սահմանում է կրթության հասանելիություն, հավասարություն և խտրականության բացառում։

ՀՀ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը (2015 թ.)
Կարգավորում է անձնական տվյալների պահպանումը, փոխանցումը և գաղտնիության ապահովումը։

ԿԳՄՍ նախարարության հրամաններ և մեթոդական ուղեցույցներ
Սահմանում են հարմարեցումների տեսակները ուսուցման և գնահատման մեջ, ինչպես նաև մասնագետների գործառույթները։

1.2. Միջազգային ուղենիշներ

ՄԲ Ծրագրերի ստանդարտներ և պրակտիկաներ (2020), մասնավորապես 0401–0404՝ հասանելիության և ներառականության պահանջներով։

ՄԲ «Հասանելիություն և ներառում» քաղաքականություն՝ արտաքին գնահատումներում աջակցության կարգավորում։

«Սովորողների բազմազանություն և ներառում ՄԲ ծրագրերում» (2016, թարմ. 2020) ուղեցույց։

ՅՈՒՆԵՍԿՕ Սալամանկայի հռչակագիր (1994)՝ համընդհանուր ներառման սկզբունքներ։

ՄԱԿ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա» (CRPD, 2006)՝ ներառական կրթությունը՝ որպես մարդու իրավունք։

ՄԱԿ «Երեխայի իրավունքների կոնվենցիա» (CRC, 1989)՝ արժանապատվություն և հավասար հնարավորություններ։

OECD՝ Կրթության արդարության և ներառման վերաբերյալ ուղեցույցներ։

1.3. Շիրակացու ճեմարանի քաղաքականություններ

Գնահատման քաղաքականություն՝ ներառական գնահատման սկզբունքներ։

Ակադեմիական ազնվության քաղաքականություն՝ արդարության և պատասխանատվության երաշխիք։

Լեզվական քաղաքականություն՝ բազմալեզու սովորողների աջակցություն։

Ընդունելության քաղաքականություններ (Կրտսեր, Միջին/Ավագ դպրոց, ՄԲ Դիպլոմային ծրագիր)։

Երեխաների պաշտպանության քաղաքականություն՝ անվտանգ միջավայր, հոգեբանական ապահովություն։

Ներառական կրթության քաղաքականություն՝ համադպրոցական ներառական մշակույթ։

Շնորհալի (Օժտված) երեխաների բացահայտման, նրանց կրթության կազմակերպման հեղինակային ծրագիր։

1.4. Մասնագիտական էթիկական նորմեր

Ճեմարանում գործող ծառայությունները ղեկավարվում են նաև մասնագիտական էթիկայի կոդեքսներով, որոնք երաշխավորում են գաղտնիությունը, բարեկիրթ ու հավասար վերաբերմունքը և մասնագիտական պատասխանատվությունը։

Հոգեբանական կենտրոնի էթիկական կանոններ

Լոգոպեդական ծառայության էթիկական կանոններ

Հատուկ մանկավարժության ծառայության էթիկական կանոններ

1.5. Արագ կողմնորոշման աղյուսակ

Փաստաթուղթ	Մակարդակ	Ազդեցության ոլորտներ
ՀՀ «ՀԿԿ» օրենք	Ազգային	Ընդունելություն, հարմարեցումներ, մասնագետների դերեր
ՀՀ «Կրթության մասին» օրենք	Ազգային	Հավասար հասանելիություն, խտրականության բացառում
Անձնական տվյալների պաշտպանություն	Ազգային	Գաղտնիություն, արժանապատվություն, տվյալների անվտանգություն
ԿԳՄՄՆ հրամաններ/ուղեցույցներ	Ազգային	Ուսուցում, գնահատում, հասանելիություն, միջավայր
ՄԲ Ստանդարտներ և պրակտիկաներ (2020)	Միջազգային	Քաղաքականության շրջանակ, գնահատում, վերանայում
ՄԲ Հասանելիություն և ներառում	Միջազգային	Բացառապես՝ արտաքին գնահատումներում աջակցության կարգավորում
Սալամանկայի հռչակագիր, ՄԱԿ CRPD, CRC	Միջազգային	Իրավունքի, արժանապատվության, մասնակցության երաշխիք
Գնահատում / Ակադեմիական ազնվություն	Ներքին	Արդար գնահատում, ազնիվ մասնակցություն
Լեզվի քաղաքականություն	Ներքին	Բազմալեզու սովորողների աջակցություն
Ընդունելության քաղաքականություն	Ներքին	Թափանցիկ ընթացակարգեր, համագործակցություն ընտանիքների հետ
Երեխայի պաշտպանություն	Ներքին	Անվտանգ և ապահով միջավայր, հոգեբանական բարեկեցություն
Օժտվածության ծրագիր	Ներքին	Բացահայտման և զարգացման ուղիներ

Հավելված 2. Բացատրական բառարան

Աղճատում իմացական/Նախապաշարմունք (Bias) - Գիտակցված կամ անգիտակցական վերաբերմունք, համոզմունք, որը հանգեցնում է անհավասար գնահատականի՝ սովորողների, խմբերի կամ երևույթների նկատմամբ: Կարող է արտահայտվել խոսքում, դրսևորվել ակնկալիքներում կամ գնահատման այլ ձևերի միջոցով: Ներառական միջավայրը ձգտում է նվազեցնել նախապաշարմունքները՝ կրթական պայմանների հավասարության ապահովման համար:

Աճի մտածելակերպ (Growth Mindset) – Համոզմունքների ամբողջություն կամ մոտեցում, որ կարողությունները և ինտելեկտը զարգանում են ջանքերի, սխալներից սովորելու և շարունակական ջանադրության շնորհիվ: Աճի մտածելակերպը խթանում է ինքնավստահությունը, տոկունությունը և դրական վերաբերմունքը դժվարությունների հանդեպ:

Ակադեմիական ազնվություն (Academic Integrity) - Սկզբունքների և վարքագծերի համակարգ, որը հիմնված է ազնվության, վստահության, արդարության, հարգանքի և պատասխանատվության վրա և ապահովում է ուսումնական աշխատանքի իսկությունը, ինքնուրույնությունը և էթիկական իրականացումը: Ճեմարանում կարգավորվում է Ակադեմիական ազնվության քաղաքականությամբ:

Այստեղ և հիմա լինելու վիճակ (Mindfulness) - Գիտակցված ուշադրության և ներկայության վիճակ, որի միջոցով մարդը ընկալում է իր զգացմունքները, մտքերը և մարմնական զգացողությունները՝ առանց գնահատելու: Կրթության մեջ այն նպաստում է կենտրոնացմանը, սթրեսի նվազեցմանը և հուզական հավասարակշռությանը: Կարևոր նախապայման է ուսումնական հաջողությունների հասնելու համար:

Անհատական մոտեցում (Personalization) - Ուսուցման այն մոտեցումը, որի դեպքում բովանդակությունը, մեթոդները և ուսուցման տեմպը հարմարեցվում են սովորողի անհատական կարիքներին, հետաքրքրություններին և նպատակներին: Անհատական մոտեցումը նպաստում է սովորողի ինքնավարության և պատասխանատվության զարգացմանը:

Անհատական ուսումնական պլան Individual Education Plan (IEP) - Փաստաթուղթ, որը կազմվում է սովորողի զարգացման կարիքների հիման վրա՝ սահմանելով կոնկրետ նպատակներ, աջակցության ձևեր և առաջընթացի չափորոշիչներ: ԱՈՒՊ-ն մշակվում է համագործակցաբար՝ ուսուցչի, մասնագետների և ծնողի մասնակցությամբ:

Ապացույցների վրա հիմնված գործելակերպ (Evidence-Based Practice) - Կրթական կամ հոգեբանական միջամտությունների այն մոտեցումը, որը հիմնված է գիտական հետազոտությունների, մասնագիտական փորձի և տվյալների վրա:

Նման մոտեցումը ապահովում է արդյունավետություն և հաշվետվողականություն կրթական որոշումների կայացման մեջ:

Ապրումակցում (Empathy) - Այլոց զգացմունքները, վերապրումներն ու փորձառությունը ճանաչելու և դրանց նկատմամբ ընդունող ու հոգատար լինելու կարողություն: Ներառական կրթության միջավայրում ապրումակցումը հիմք է ընդունման և փոխադարձ հարգանքի մշակույթի ձևավորման համար:

Առաջնորդության հնարավորություններ (Leadership Opportunities) - Կրթական միջավայրում ստեղծված հնարավորություններ, որոնք սովորողներին թույլ են տալիս ստանձնել պատասխանատվություն, մասնակցել որոշումների կայացմանը և զարգացնել առաջնորդական հմտությունները:

Առաջնորդություն (Leadership) - Գործընթաց, որի միջոցով անձը կամ խումբը ազդում է մյուսների վրա՝ ընդհանուր նպատակին հասնելու համար: Կրթության մեջ առաջնորդությունը ներառում է համագործակցային որոշումների կայացում, պատասխանատվություն, սովորողների զարգացման և առաջընթացի նկատմամբ նվիրվածություն:

Առողջական վիճակ (Health Condition) - Մարդու ֆիզիկական կամ հոգեկան վիճակը, որը կարող է ազդել նրա առօրյա գործունեության և ուսուցման վրա: Ներառական կրթության մեջ առողջական վիճակը դիտարկվում է ոչ որպես սահմանափակում, այլ որպես գործոն, որը պահանջում է համապատասխան աջակցություն և հարմարեցում:

Արագացում (Acceleration) - Ուսուցման գործընթացի կազմակերպման մոտեցում, որի դեպքում սովորողին հնարավորություն է տրվում ավելի արագ տեմպով կամ ավելի բարձր մակարդակով յուրացնել ուսումնական բովանդակությունը՝ ըստ նրա կարողությունների և պատրաստվածության:

Արդարություն / Հավասար հնարավորություններ (Equity) - Կրթության մեջ բոլոր սովորողներին անհրաժեշտ աջակցություն և պայմաններ տրամադրելու սկզբունք՝ որպեսզի յուրաքանչյուրն ունենա հաջողության հասնելու հավասար հնարավորություն: Արդարությունը նշանակում է տարբեր պայմաններ՝ ըստ տարբեր կարիքների, ոչ թե նույն պայմաններ՝ բոլորի համար:

Արժեքներ (Values) - Հիմնական սկզբունքներ և համոզմունքներ, որոնք ուղղորդում են մարդու վարքը, որոշումների կայացումը և հարաբերությունների կառուցումն ու պահպանումը: Ներառական կրթության արժեքները հիմնված են հարգանքի, արդարության, ապրումակցման և բազմազանության ընդունման վրա:

Բազմազանություն (Diversity) - Անձանց, մշակույթների, լեզուների, կարողությունների և սոցիալ-տնտեսական փորձառությունների տարբերությունը, որը դիտվում է որպես կրթական միջավայրի հարստություն: Ներառական կրթությունը հիմնվում է այն սկզբունքի վրա, որ բազմազանությունը ոչ թե խոչընդոտ է, այլ զարգացող և փոխլրացնող միջավայրի աղբյուր:

Բազմամասնագիտական թիմ (Multidisciplinary Team) - Ուսուցիչների, մանկավարժների, հոգեբանների, հատուկ մանկավարժների, լոգոպեդների, ծնողների և այլ մասնագետների համագործակցային խումբ, որը համատեղ գնահատում է սովորողի կարիքները և մշակում աջակցության պլան: Նման թիմերը ներառական կրթության հիմնական գործառույթային միավորն են:

Բարեկեցություն (Well-being) - Մարդու ֆիզիկական, հուզական և սոցիալական հավասարակշռության վիճակ, որն արտահայտվում է անվտանգության, բավարարվածությա և արժեքավոր լինելու զգացումով: Դպրոցական բարեկեցությունը նպաստում է ուսումնական առաջադիմությանը և հոգեկան առողջությանը:

Բուլլինգ (Bullying) - Կրկնվող, դիտավորությամբ վնասող վարք, որն դրսևորվում է ուժի կամ ազդեցության անհավասարությամբ և ուղղված է մեկ այլ սովորողի կամ սովորողների խմբի արժանապատվության նվաստացմանը և/կամ հուզական կայունության խախտմանը: Կարող է լինել ֆիզիկական, խոսքային, հոգեբանական կամ թվային (cyberbullying): Ներառական կրթության մեջ բուլլինգը դիտվում է որպես ապահով սոցիալ-հուզական միջավայրի խախտում, որի կանխարգելումն ու արձագանքը պետք է հիմնված լինեն աջկվման և վերականգնողական մոտեցումների վրա:

Գաղտնիություն (Confidentiality) - Սովորողի և ընտանիքի վերաբերյալ տեղեկատվության պահպանման էթիկական և իրավական պարտավորություն, որի համաձայն տվյալները հասանելի են միայն այն մասնագետներին, ովքեր անմիջականորեն ներգրավված են աջակցության գործընթացում:

Գնահատում (Evaluation) - Ուսուցման և զարգացման գործընթացի շարունակական վերլուծություն, որի նպատակը սովորողի առաջընթացի, ուժեղ և աջակցության կարիք ունեցող կողմերի բացահայտումն է: Ներառական կրթության մեջ գնահատումն ուղղված է ոչ թե համեմատությանը, այլ անհատական աճի արձանագրմանը:

Գնահատում ամփոփիչ (Assessment of Learning) - Գնահատում, որը կատարվում է ուսուցման որոշակի փուլի ավարտին՝ սովորողի ձեռքբերումները չափելու և ստուգելու համար: Կիրառվում է արդյունքների ամփոփման և հաշվետվության նպատակով:

Գնահատում ձևավորող (Assessment for Learning) - Գնահատման այն տեսակն է, որի նպատակը սովորողի առաջընթացի ընթացիկ վերահսկումն է՝ նրան հետադարձ կապ տալու, ուղղորդելու և ուսուցման որակը բարձրացնելու համար:

Գնահատում ձևավորող (Formative Assessment) - Գնահատման ձև, որն իրականացվում է ուսուցման ընթացքում՝ սովորողի առաջընթացը դիտարկելու և անհրաժեշտության դեպքում ուսումնառության մեջ հարմարեցումներ անելու համար: Ձևավորող գնահատումը աջակցում է զարգացմանը և առաջընթացին:

Գործունակություն սովորողի (Student Agency) - Սովորողի կարողությունը գիտակցաբար որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու և պատասխանատվություն ստանձնելու իր ուսուցման գործընթացում: Ներառական միջավայրում նպատակը սովորողին ոչ թե օգնություն ընդունող, այլ կրթական գործընթացի ակտիվ մասնակից դարձնելն է:

Գրագիտություն (Literacy) - Կարդալու, գրելու, խոսելու և ընկալելու հմտությունների ամբողջություն, որը հնարավորություն է տալիս մարդուն արդյունավետ հաղորդակցվել և սովորել: Ներառական կրթության մեջ գրագիտությունը դիտվում է որպես մտածողության, արտահայտման և ինքնաարտահայտման գործիք:

Դասավանդման ռազմավարություններ (Teaching Strategies) - Ուսուցման մեթոդների և մոտեցումների համադրություն, որոնք նպաստում են սովորողների ակտիվ մասնակցությանը, համագործակցությանը և տարբերակված ուսուցմանը: Ներառական միջավայրում ուսուցիչը ընտրում է ռազմավարությունները սովորողների կարիքներին, հետաքրքրություններին և ուսումնական տեմպին համապատասխան:

Դեպքի վարում (Case Management) - Բազմամասնագիտական թիմի համակարգված աշխատանք սովորողի կարիքների գնահատման, աջակցության պլանավորման և արդյունքների մշտադիտարկման նպատակով: Ներառում է տեղեկատվության հավաքագրում, համակարգում և համագործակցային որոշումների կայացում:

Դիտում (Observation) - Սովորողի վարքի, ուսումնական առաջադրանքների կատարման, հաղորդակցման և հուզական արձագանքների համակարգված ուսումնասիրություն՝ նրա ուժեղ և աջակցության կարիք ունեցող կողմերը բացահայտելու նպատակով: Դիտումը կարիքների գնահատման և աջակցության պլանավորման հիմնական մեթոդներից է:

Երեխայակենտրոն (սովորողակենտրոն) մոտեցում (Child-Centered Approach) - Կրթական փիլիսոփայություն, որի կենտրոնում սովորողի անձն է՝ իր կարիքներով, առանձնահատկություններով, հետաքրքրություններով և զարգացման տեմպով: Այս մոտեցման դեպքում ուսումնական գործընթացի ելակետը ոչ թե ծրագիրն է, այլ սովորողը:

Երեխայի պաշտպանություն և անվտանգություն (Child Protection and Safeguarding) - Քաղաքականությունների, ընթացակարգերի և գործելակերպերի համակարգ, որը նպատակ ունի պաշտպանել երեխաներին ցանկացած տեսակի վնասից, անտեսումից կամ վտանգից և ապահովել նրանց բարեկեցությունն ու անվտանգությունը կրթական միջավայրում:

Զարգացման ուշացում / հետաձգում (Developmental Delay) — Երեխայի ֆիզիկական, խոսքային, ճանաչողական, սոցիալական կամ հուզական

զարգացման տեմպի էական հետ մնալը տարիքային նորմերից: Կարող է լինել ժամանակավոր կամ կայուն և պահանջում է վաղ միջամտություն՝ կարողությունների զարգացմանն աջակցելու համար

Զգայունություն (Vulnerability) - Անձի կամ խմբի այն վիճակը, երբ նրանք ավելի խոցելի են սոցիալական, հուզական կամ ֆիզիկական դժվարությունների նկատմամբ: Ներառական կրթության մեջ զգայունությունը դիտվում է որպես աջակցություն պահանջող, բայց ոչ սահմանափակող առանձնահատկություն:

Էթիկական ուղեցույցներ (Ethical Guidelines) - Մասնագիտական վարքագծի նորմեր և սկզբունքներ, որոնք ուղղորդում են կրթական և աջակցող մասնագետների աշխատանքը՝ ապահովելով հարգալից, պատասխանատու և արդար փոխգործակցություն բոլոր կողմերի հետ:

Թիմային աշխատանք / Համագործակցություն (Teamwork) - Ուսուցիչների, մանկավարժների, աջակցող մասնագետների և սովորողների փոխգործակցությունը ընդհանուր նպատակի շուրջ՝ կիսելով պատասխանատվությունն ու դերերը: Թիմային աշխատանքը կարևոր է բազմամասնագիտական մոտեցման, փոխօգնության և ստեղծարար մտածողության զարգացման համար:

Ինքնուրույնություն (Independence) - Սովորողի կարողությունը իր ուսման և վարքի համար նախաձեռնություն ցուցաբերելու, ընտրություն կատարելու և պատասխանատվություն ստանձնելու: Ներառական կրթությունը խթանում է ինքնուրույնությունը՝ ապահովելով աջակցություն առանց կախյալություն ձևավորելու:

Խմբային աշխատանք (Group Work) - Ուսուցման ձև, որտեղ սովորողները համագործակցում են ընդհանուր նպատակի շուրջ՝ կիսելով պատասխանատվությունը և նպաստելով միմյանց առաջընթացին: Խմբային աշխատանքը զարգացնում է հաղորդակցման, և համագործակցության հմտությունները, ինչպես նաև ապրումակցման կարողությունը:

Խոչընդոտ (Barrier) - Արտաքին կամ ներքին գործոն, որը սահմանափակում է սովորողի մասնակցությունը կրթական գործընթացին կամ նրա հասանելիությունը ուսումնական ռեսուրսներին: Խոչընդոտները կարող են լինել ֆիզիկական (շենքային միջավայր), հոգեբանական (անվստահություն, վախ), սոցիալական (կարծրատիպեր), լեզվական կամ կազմակերպչական:

Խոսքի զարգացում (Language Development) - Խոսքի, բառապաշարի, լսելու և հասկանալու հմտությունների ձևավորում և կատարելագործում: Խոսքի զարգացումը կարևոր է ուսումնական առաջադիմության և սոցիալական ինտեգրման համար, ուստի ներառական կրթության մեջ անհրաժեշտ է ապահովել բազմալեզու և հասանելի հաղորդակցման պայմաններ:

Խտրականության բացառում (Non-Discrimination) - Կրթական և հասարակական հարաբերությունների սկզբունք, ըստ որի բոլոր անձինք ունեն հավասար իրավունքներ և հնարավորություններ՝ անկախ սեռից, տարիքից, առողջական վիճակից, ազգային կամ սոցիալական պատկանելությունից: Խտրականության բացառումը ներառականության հիմքն է:

Խտրականություն (Discrimination) - Անձի կամ խմբի նկատմամբ անհավասար վերաբերմունք՝ հիմնված որևէ առանձնահատկության վրա (օր.՝ սեռ, տարիք, առողջական վիճակ, սոցիալական կարգավիճակ և այլն): Կրթական համակարգում խտրականությունը խոչընդոտում է հավասար հնարավորություններին և հակասում է ներառականության ու իրավահավասարության սկզբունքներին:

Կարիքների գնահատում (Needs Assessment) - Գործընթաց, որի ընթացքում պարզվում են սովորողի ուսումնական, իմացական, հուզական և սոցիալական կարիքները՝ դիտարկումների, զրույցների, հարցումների և դրանց արդյունքների վերլուծության միջոցով: Կարիքների գնահատումը հիմք է անհատական մոտեցումների մշակման և աջակցության պլանավորման համար:

Կարողունակություն (Competence) - Գիտելիքների, հմտությունների, արժեքների և վերաբերմունքների ինտեգրված ամբողջություն, որը հնարավորություն է տալիս արդյունավետ գործել տարբեր իրավիճակներում: Ներառական կրթության համատեքստում կարևոր է սոցիալ-հուզական և միջմշակութային կարողունակությունների զարգացումը:

Կյանքի հմտություններ (Life Skills) - Գործնական հմտությունների համակցություն, որը հնարավորություն է տալիս սովորողին արդյունավետ գործել առօրյա և սոցիալական իրավիճակներում: Դրանք ներառում են հաղորդակցման, ինքնակարգավորման, խնդիրների լուծման, որոշումների կայացման և թիմային աշխատանքի հմտությունները:

Կրթական կարիքներ (Learning Needs) - Սովորողի առանձնահատկություններից բխող անհրաժեշտություն, որը պահանջում է ուսուցման ձևերի, բովանդակության կամ աջակցության տարբերակում՝ նրա առաջադիմությունը ապահովելու նպատակով: Կրթական կարիքները կարող են լինել ժամանակավոր կամ մշտական և ներառել իմացական, հուզական, սոցիալական կամ վարքային ոլորտներ:

Կրթական ներառականություն (Educational Inclusion) - Կրթական քաղաքականություն և պրակտիկա, որի նպատակը բոլոր սովորողների հավասար մասնակցությունն է ուսուցման գործընթացին՝ անկախ նրանց կարողություններից, սոցիալական կամ մշակութային տարբերություններից: Կրթական ներառականությունը ապահովում է պատկանելիության և արժեքավոր լինելու զգացում բոլորի համար:

Կրթությունից դուրս մնալու կանխարգելում (Dropout Prevention) - Միջոցառումների և ռազմավարությունների համակարգ, որը նպատակ ունի կանխել սովորողների վաղաժամկետ դուրս մնալը դպրոցից: Ներառում է վաղ նախազգուշացման մեխանիզմներ, ծնողների հետ համագործակցություն, սոցիալ-հոգեբանական աջակցություն և անհատական ուսումնական պլանավորում:

Հաղորդակցում (Communication) - Տեղեկության, մտքերի և հույզերի փոխանակման գործընթաց, որը ներառում է ոչ խոսքային և խոսքային, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր այնպես էլ հաղորդակցման ձևեր: Ներառական միջավայրում հաղորդակցումը դիտվում է որպես հասանելիության հիմնական պայման՝ ընդգրկելով նաև այլընտրանքային և օժանդակ հաղորդակցման ձևեր:

Համագործակցություն (Collaboration) - Ուսուցիչների, մանկավարժների, հոգեբանների, լոգոպեդների, ծնողների և սովորողների համատեղ աշխատանքը՝ սովորողի զարգացմանն առնչվող ընդհանուր նպատակի շուրջ: Համագործակցությունը ներառականության առանցքային սկզբունքն է և ապահովում է բազմամասնագիտական մոտեցում:

Համադպրոցական մոտեցում (Whole-School Approach) - Դպրոցի կառավարման, դասավանդման, միջավայրի և համագործակցության բոլոր մակարդակների համակարգված մոտեցում՝ ուղղված սովորողների զարգացմանն ու բարեկեցությանը: Այս մոտեցումը ներառում է ամբողջ համայնքի մասնակցություն՝ տնօրենություն, ուսուցիչներ, աշխատակիցներ, սովորողներ և ծնողներ:

Համապարփակ կրթություն (Holistic Education) - Կրթական մոտեցում, որն ընդգրկում է սովորողի ինտելեկտուալ, հուզական, սոցիալական, ֆիզիկական և բարոյական զարգացումը: Համապարփակ կրթությունը նպատակ ունի ձևավորել ոչ միայն գիտելիք ունեցող, այլև մտածող, զգացող և պատասխանատու մարդ:

Հաշմանդամություն / Ֆունկցիոնալ խանգարում (Disability) - Առողջական վիճակի հետևանքով մարդու ֆիզիկական, զգայական, մտավոր կամ հոգեկան գործառույթների խանգարում, որը սահմանափակում է նրա մասնակցությունը հասարակական կյանքի որոշ ոլորտներին: Կրթության մեջ «ֆունկցիոնալ խանգարում» հասկացությունը վերաբերում է այն դեպքերին, երբ սովորողը ունի կրթական աջակցության կարիք՝ ներառման նպատակով:

Հասակակիցների աջակցություն (Peer Support) - Սովորողների միջև ձևավորված փոխօգնության համակարգ, որտեղ նրանք միմյանց աջակցում են ուսումնական, սոցիալական կամ հուզական հարցերում: Այս մոտեցումը խթանում է պատկանելիության, վստահության և համերաշխության զգացումը:

Հասանելիության ապահովում / Ներգրավում (Outreach) - Գործունեություն, որի նպատակն է ապահովել բոլոր սովորողների ընդգրկումը կրթական ծառայությունների մեջ, ներառյալ նրանց, որոնք սոցիալ-տնտեսական կամ

առողջական պատճառներով դուրս են մնացել կրթությունից: Հասանելիության ապահովումը ներառում է տեղեկացման, խորհրդատվության և համայնքային համագործակցության մեխանիզմներ:

Հավասարություն և արդարություն (Equality vs Equity) - Հավասարություն (Equality)՝ բոլոր սովորողներին նույն պայմանների և ռեսուրսների տրամադրում: **Արդարություն (Equity)**՝ տարբեր աջակցությունների և պայմանների ապահովում՝ յուրաքանչյուր սովորողի իրական կարիքներին համապատասխան, հավասար հաջողության հնարավորություն ստեղծելու նպատակով:

Հարմարեցում բովանդակության / ուսումնական նյութի հարմարեցում (Adaptation) – Ուսումնական նյութի կամ առաջադրանքների այնպիսի փոփոխություն, որը թույլ է տալիս սովորողին աշխատել իր ունակություններին կամ առանձնահատկություններին համապատասխան: Ի տարբերություն *հարմացում կազմակերպման*՝ այստեղ կարող է փոփոխվել ուսումնական նյութի կամ առաջադրանքի ծավալը կամ բարդությունը

Հարմարեցում կազմակերպման /հատուկ պայմանների ապահովում (Accommodation)- Ուսումնառության կամ գնահատման գործընթացում արված այնպիսի փոփոխություններ, որոնք օգնում են սովորողին ներկայացնել իր կողմից ձեռք բերված գիտելիքն ու հմտությունները՝ առանց բովանդակության կամ չափանիշների փոփոխության (օրինակ՝ լրացուցիչ ժամանակ, հանձնարարության այլընտրանքային ձև, օժանդակ տեսողական նյութ):

Հարմարեցում ուսումնական ծրագրի / հարմարեցված կրթական ծրագիր (Curriculum adaptation) - Ուսումնական ծրագրի բովանդակության, գործընթացների կամ գնահատման ձևերի փոփոխություն՝ սովորողի ունակություններին կամ առանձնահատկություններին համապատասխանեցնելու նպատակով: Կարող է ընդգրկել թեմաների պարզեցում կամ բարդացում, առաջադրանքների ծավալի կամ բարդության նվազեցում կամ մեծացում կամ արագացում կամ այլընտրանքային ձևերի կիրառում:

Հարստացում (Enrichment) - Կրթական գործունեության և առաջադրանքների ընդլայնում կամ խորացում, որը նպաստում է սովորողի հետաքրքրությունների, կարողությունների և մտածողության զարգացմանը՝ հիմնական ուսումնական ծրագրի սահմաններից դուրս:

Հետադարձ կապ (Feedback) - Ուսումնառության գործընթացում սովորողին իր առաջադիմության, ուժեղ կողմերի և բարելավման հնարավորությունների վերաբերյալ տրվող տեղեկատվություն: Կառուցողական հետադարձ կապը նպաստում է մոտիվացիային, ինքնակարգավորմանն ու ինքնաճանաչմանը:

Հոգատարություն (Care) - Մարդկային հարաբերությունների որակ, որը արտահայտվում է այլոց բարեկեցության նկատմամբ ուշադրությամբ, աջակցությամբ և պատասխանատվությամբ: Կրթական միջավայրում

հոգատարություն ցուցաբերել նշանակում է նկատել և հաշվի առնել սովորողի հուզական, սոցիալական և ֆիզիկական կարիքները՝ որպես ուսումնական գործընթացի անբաժանելի մաս։

Հոգեկան առողջություն (Mental Health) - Անձի բարեկեցության վիճակ, որը բնորոշվում է սեփական ներուժը գիտակցելու, կյանքի սթրեսներին դիմակայելու, արդյունավետ աշխատելու և համայնքին ներդրում ունենալու կարողությամբ։ Կրթական միջավայրում հոգեկան առողջությունը ներառում է հուզական կայունություն, սոցիալական հմտություններ և ինքնակարգավորում։

Հուզական ոլորտի զարգացում (Emotional Development) - Սեփական հույզերը և զգացմունքները ճանաչելու, արտահայտելու և կարգավորելու, ինչպես նաև ուրիշների հույզերը և զգացմունքները հասկանալու կարողության ձևավորումը։ Այն կարևոր դեր ունի ինքնակարգավորման, սոցիալական փոխհարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի ձևավորման գործում։

Մանկավարժություն (Pedagogy) - Դասավանդման գիտական և գործնական համակարգ, որը ներառում է ուսուցման կազմակերպման սկզբունքները, մեթոդները և ռազմավարությունները։ Ներառական մանկավարժությունը խթանում է սովորողի ակտիվ մասնակցությունը, տարբերակված մոտեցումը և հոգեբանական ապահով միջավայրի ձևավորումը։

Մասնագիտական զարգացում (Professional Development) – Ուսուցիչների, մանկավարժների և աջակցող մասնագետների շարունակական ուսուցման և ինքնազարգացման գործընթաց, որի նպատակն է կատարելագործել մասնագիտական հմտությունները, նորացնել գիտելիքները և ապահովել կրթական բարձր որակ։ Ներառական կրթության համատեքստում այն ներառում է տարբերեցված ուսուցման, հուզական աջակցության և համագործակցային աշխատանքի հմտությունների զարգացում։

Մասնակցություն (Participation) - Սովորողի լիարժեք ներգրավվածությունը կրթական, սոցիալական և մշակութային գործունեության բոլոր ձևերում՝ անկախ կարողություններից կամ պայմաններից։ Մասնակցությունը ներառում է նաև սովորողի ձայնի և ընտրության իրավունքը կրթական որոշումների կայացման մեջ։

Մատչելիություն (Accessibility) - Կրթական միջավայրի, շենքային պայմանների, տեղեկատվության փոխանցման, հաղորդակցության և ուսումնական գործընթացի այնպիսի կազմակերպում, որը բոլոր սովորողների համար ապահովում է լիարժեք մասնակցության հնարավորություն՝ անկախ նրանց ֆիզիկական, զգայական, լեզվական կամ այլ առանձնահատկություններից։

Մենթորություն (Mentoring) - Կառուցվածքային աջակցման գործընթաց, որի ընթացքում փորձառու մասնագետը կամ ուսուցիչը ուղղորդում, աջակցում և խթանում է սովորողի կամ ուսուցչի մասնագիտական և անձնային զարգացումը։

Միջամտություն (Intervention) - Նպատակային աջակցություն կամ գործողություն, որն իրականացվում է սովորողի ուսումնական կամ հուզական դժվարությունները հաղթահարելու համար: Կարող է լինել ուսուցման, վարքի կամ սոցիալ-հուզական աջակցության ձևով՝ համաչափ ըստ անհրաժեշտության (Միջամտության 1-ին, 2-րդ, 3-րդ մակարդակներ, Tier 1, 2, 3):

Միջնորդ (Facilitator) - Մասնագետ կամ ուսուցիչ, որի դերը սովորողներին ուղղորդելն է՝ ստեղծելով ինքնուրույն մտածելու, համագործակցելու և խնդիրներ լուծելու պայմաններ: Միջնորդը չի տալիս պատրաստի պատասխաններ, այլ ապահովում է այն միջավայրը, որտեղ սովորողը գտնում է դրանք ինքնուրույն:

Մշակույթի հանդեպ զգայունակ մանկավարժություն (Culturally Responsive Pedagogy) - Դասավանդման մոտեցում, որը ճանաչում, արժևորում և ներառում է սովորողների մշակութային, լեզվական և սոցիալական ինքնությունները ուսումնական գործընթացում՝ նպաստելով մասնակցության և պատկանելիության զգացմանը:

Մշտադիտարկում (Monitoring) - Սովորողի առաջընթացի, աջակցության միջոցների և միջամտությունների արդյունավետության պարբերական դիտարկում և վերլուծություն: Մշտադիտարկումը ապահովում է փաստահեն որոշումների կայացումը և ուսուցման շարունակական բարելավումը:

Մոտիվացիա (Motivation) - Ներքին կամ արտաքին գործոնների համակարգ, որը խթանում է սովորողին մասնակցել ուսուցման գործընթացին և հասնել նպատակներին: Ներառական կրթությունը խթանում է ներքին մոտիվացիան՝ ապահովելով հետաքրքրություն, պատկանելիության զգացում և ինքնավարություն:

Մուտքի ապահովման պայմաններ (Access Arrangements) - Ուսուցման, ուսումնառության կամ գնահատման ընթացքում կիրառվող կազմակերպչական և ընթացակարգային պայմաններ, որոնք նպատակ ունեն ապահովելու սովորողի լիարժեք և արդար մասնակցությունը կրթական գործընթացին՝ հաշվի առնելով նրա անհատական կարիքներն ու առանձնահատկությունները:

Նեյրոբազմազանություն (Neurodiversity) - Ուղեղի ճանաչողական պրոֆիլների բնական բազմազանությունը, որը ներառում է տարբեր նեյրոլոգիական առանձնահատկություններ՝ օրինակ՝ աուտիզմ, ուշադրության պակասի խանգարում (ADHD), դիսլեքսիա և այլն: Նեյրոբազմազանության սկզբունքը շեշտում է տարբերությունների ընդունումը, ոչ թե բուժումը:

Ներառական մշակույթ (Inclusive Culture) - Դպրոցի արժեքների, սկզբունքների, համոզմունքների և վարվելաձևերի համակարգ, որը խրախուսում է բազմազանության ընդունումը և համագործակցությունը: Ներառական մշակույթը ձևավորվում է այն ժամանակ, երբ բոլոր սովորողները, ուսուցիչներն ու ծնողները իրենց զգում են ընդունված, լսված և կարևոր:

Ներառում / Ներառականություն (Inclusion) - Կրթական սկզբունք և պրակտիկա, որը երաշխավորում է յուրաքանչյուր սովորողի լիարժեք մասնակցությունը ուսուցման գործընթացին՝ անկախ նրա առանձնահատկություններից: Ներառականությունը չի վերաբերում միայն հատուկ կարիքներին, այլ վերաբերում է բոլոր սովորողներին՝ հավասար ընդունման, մասնակցության և պատկանելիության հիմքով:

Ուսումնական միջավայր (Learning Environment) - Ֆիզիկական, հուզական և սոցիալական պայմանների համադրություն, որտեղ տեղի է ունենում ուսուցումը: Ներառական ուսումնական միջավայրը ապահովում է հասանելիություն, անվտանգություն, փոխհարգանք և համագործակցություն բոլոր սովորողների համար:

Ուսուցման աջակցություն (Learning Support) - Լրացուցիչ միջոցառումներ կամ միջամտություններ, որոնք օգնում են սովորողին հաղթահարել ուսումնական դժվարությունները: Կարող է ներառել անհատական խորհրդատվություն, փոքր խմբային աշխատանք, ուսումնական բացը լրացնող առաջադրանքներ կամ օժանդակ տեխնոլոգիաների կիրառում:

Ուսուցման համընդհանուր ձևավորում (Universal Design for Learning (UDL)) - Կրթական պլանավորման մոտեցում, որը նպատակ ունի ուսուցումը մատչելի դարձնել բոլոր սովորողների համար՝ ապահովելով բազմազան ուղիներ՝

ընկալման (multiple means of representation),

արտահայտման (multiple means of action and expression),

ներգրավման (multiple means of engagement) համար:
UDL-ը կանխում է խոչընդոտները և խթանում է ակտիվ մասնակցությունը բոլորի կողմից:

Պաշտպանություն և առաջմղում (Advocacy) - Ներառական արժեքների, իրավունքների և հավասար հնարավորությունների պաշտպանման և առաջմղման գործընթաց՝ ուղղված կրթական միջավայրում դրական փոփոխությունների խթանմանը:

Պատկանելիության զգացում (Belonging) - Սովորողի զգացողությունը, որ նա ընդունված է, գնահատված և կարևոր է դասարանի ու դպրոցի համայնքի համար: Ներառական կրթության հիմնարար նպատակներից մեկն է՝ ապահովել պատկանելիության բարձր մակարդակ, քանի որ այն նպաստում է հուզական կայունությանը և ուսումնական մոտիվացիային:

Վաղ միջամտություն (Early Intervention) - Ծառայությունների և աջակցության համակարգ, որը նպատակ ունի վաղ տարիքում (մինչև 6 տարեկան) հայտնաբերել և հաղթահարել երեխայի զարգացման դժվարությունները: Վաղ միջամտությունը

կանխում է հետագա բարդացումները և նպաստում է հմտությունների ձևավորմանը ընտանիքի

Վարք / Վարքային դրսևորումներ (Behavior) - Անձի արձագանքներն ու գործողությունները արտաքին կամ ներքին խթանների նկատմամբ: Կրթական միջավայրում վարքային դրսևորումները անհրաժեշտ է դիտարկել ավելի լայն՝ որպես հաղորդակցման ձև, ոչ թե միայն կարգապահական խախտում: Ներառական մոտեցումը նպատակ ունի հասկանալու վարքի պատճառը և աջակցելու ինքնակարգավորման հմտությունների ձևավորմանը:

Վերաբերմունք (Attitude) - Անձի՝ մարդկանց, երևույթների կամ իրավիճակների նկատմամբ ձևավորված կայուն հոգեբանական միտում կամ դիրքորոշում, որը ձևավորվում է նրա գիտակցական ընկալումների, զգացմունքների և վարքային արձագանքների միասնությամբ: Վերաբերմունքը որոշում է, թե ինչպես մարդը ընկալում է իր շրջապատը, ինչպես է արձագանքում տարբեր իրավիճակների և ինչպես է համագործակցում մյուսների հետ: Ներառական կրթության համատեքստում վերաբերմունքը ձևավորում է այն մշակույթը, որտեղ յուրաքանչյուր սովորող ընդունվում է իր առանձնահատկություններով և տարբերություններով

Տարբերակված ուսուցում (Differentiation / Differentiated Instruction) - Ուսուցման մոտեցում, որի դեպքում ուսուցիչը փոփոխում է բովանդակությունը, գործընթացը, արդյունքը կամ միջավայրը՝ սովորողների տարբեր կարողություններին, հետաքրքրություններին և տեմպին համապատասխանեցնելու համար: Differentiation-ը վերաբերում է մոտեցման ընդհանուր սկզբունքին, իսկ Differentiated Instruction-ը՝ դրա գործնական կիրառմանն է դասարանում: Տարբերակված ուսուցումն ապահովում է բոլոր սովորողների ներգրավվածությունն ու առաջընթացը՝ պահպանելով ընդհանուր ուսումնական նպատակները:

Քաղաքականություն (Policy) – Գործընթացների, ընթացակարգերի և որոշումների համակարգ, որը սահմանում է կրթական հաստատության տեսլականը, սկզբունքները և գործառույթները: Ներառական կրթության քաղաքականությունը ապահովում է հավասար հնարավորությունների, մատչելիության և մասնակցության երաշխիքներ բոլոր սովորողների համար:

Օժանդակ տեխնոլոգիաներ (Assistive Technology) - Սարքեր, ծրագրեր կամ տեխնոլոգիական լուծումներ, որոնք օգնում են սովորողներին հաղթահարել ֆիզիկական կամ հաղորդակցական սահմանափակումները (օրինակ՝ խոսքի սինթեզատոր, տպագրական տեքստի մեծացնող ծրագիր, լսողական սարքեր):

Օժտված սովորողներ (Gifted Learners) - Սովորողներ, որոնք դրսևորում են տարիքային միջին մակարդակից բարձր ինտելեկտուալ, ստեղծագործական, սոցիալ-հուզական կամ ակադեմիական ներուժ և պահանջում են զարգացնող ու հարստացնող կրթական միջավայր:

Օժտվածություն (Giftedness) - Սովորողի առանձնահատուկ կարողությունը՝ ինտելեկտուալ, ստեղծագործական կամ սոցիալ-հուզական ոլորտներում, որը գերազանցում է տարիքային միջին մակարդակը և պայմանավորում է առտառողց հաջողությունների հասնելու հնարավորությունը: Օժտվածությունը պահանջում է զարգացնող միջավայր և անհատական մոտեցում՝ ներառականության սկզբունքներով:

Հավելված 3. Դերեր և պարտականություններ. Արագ կողմնորոշման աղյուսակ

Այս աղյուսակը ամփոփում է ներառականության իրականացման գործընթացում ներգրավված բոլոր մասնագետների և շահառուների հիմնական գործողությունները:

Դերակատար	**Հիմնական պարտականություններ**
Տնօրենություն	Սահմանում և իրականացնում է ներառականության ռազմավարությունը. ապահովում է անհրաժեծտ ռեսուրսների առկայությունը, վերահսկում է քաղաքականության կատարումը և մշտադիրակում իրականացումը: Զարգացնում է համագործակցության և պատասխանատվության միասնական մշակույթ:
Մանկավարժական առաջնորդության խորհուրդ	ՄԱԽ-ի անդամները իրականացնում և ապահովում են՝ դասավանդման որակի, ուսումնական ծրագրերի և միջավայրի շարունակական բարելավումը՝ ներառականության սկզբունքների հիման վրա: Աջակցում են ուսուցիչների մասնագիտական զարգացմանը, խթանում են ներառական մեթոդների կիրառումը, հետևում են, որ աջակցության մեխանիզմները հետևողականորեն կյանքի կոչվեն դասարանում: Կազմակերպում են համագործակցային աշխատանք, ընդունում են տվյալահեն որոշումներ և պատասխանատու են ներառական կրթության համահունչ իրագործման համար դպրոցական տարբեր մակարդակներում:

Ներառական կրթության համակարգող	Ղեկավարում է կարիքների հայտնաբերման և ուղղորդման գործընթացները. համակարգում է ԱՈւԾ/ԱՈւՊ մշակման, իրականացման, դրանց վերահսկման ու վերանայման գործընթացները: Կապող օղակ է ուսուցիչների, մասնագետների, ծնողների և տնօրենության միջև:
Դասավանդող ուսուցիչներ	Իրականացնում են ՈւՀՁ և ՏՈւ (UDL and DI) մոտեցումներով դասավանդում. կիրառում են ԱՈւԾ/ԱՈւՊ-ում նշված աջակցությունները և հարմարեցումները, մշակում են ներգրավող, անվտանգ և համագործակցային միջավայր, կատարում են մշտադիտարկում և փաստաթղթավորում, համագործակցում են մասնագետների, մանկավարժների և ծնողների հետ:
Խմբի մանկավարժ	Աջակցում է սովորողի սոցիալ-հուզական բարեկեցությանը, միջնորդում է սովորող-ծնող-ուսուցիչ հաղորդակցմանը, աջակցում է ինքնակարգավորման և դիմակայության հմտությունների զարգացմանը, մասնակցում է ԱՈւԾ/ԱՈւՊ գործընթացներին և անցումային փուլերի աշխատանքներին:
Հոգեբան	Իրականացնում է ճանաչողական և սոցիալ-հուզական ոլորտների գնահատումներ, տրամադրում է անհատական և խմբային խորհրդատվություն, մշակվում և վերահսկում է աջակցության պլաններում նշված հոգեբանական բաղադրիչները, աջակցում է ուսուցիչներին, մանկավարժներին և ծնողներին՝ վարքային և ՍՀՁ ռազմավարությունների և մոտեցումների իրականացման հարցերում:
Լոգոպեդ	Գնահատում է սովորողի խոսքի զարգացման մակարդակը և բացահայտում է կարիքները, իրականացնում է թիրախային միջամտություններ անհատապես կամ փոքր խմբով, տրամադրում է մասնագիտական խորհրդատվություն ուսուցիչներին, մանկավարժներին և ծնողներին: Մասնակցում է աջակցության պլանների մշակման և մշտադիտարկման աշխատանքներին:

Հատուկ մանկավարժ	Գնահատում է սովորողի իմացական ոլորտի զարգացման մակարդակը և բացահայտում է կարիքները, իրականացնում է թիրախային միջամտություններ անհատապես կամ փոքր խմբով, տրամադրում է մասնագիտական խորհրդատվություն ուսուցիչներին, մանկավարժներին և ծնողներին: Մասնակցում է աջակցության պլանների մշակման և մշտադիտարկման աշխատանքներին:
Ընդունելության քննությունների համակարգող	Համակարգում է հարմարեցումների կիրառությունը գնահատումների ընթացքում, ապահովում է համապատասխանությունը ներքին քաղաքականություններին և IB պահանջներին:
Ծնողներ/ խնամակալներ	Տրամադրում են երեխայի զարգացման վերաբերյալ կարևոր տեղեկատվություն, ակտիվ մասնակցում են ԱՈՒԾ/ԱՈՒՊ մշակման աշխատանքներին, ապահովում են աջակցություն ուսուցմանը և սոցիալ-հուզական զարգացմանը, մասնակցում են իրազեկող ծրագրերին և համագործակցության հանդիպումներին:
Սովորողներ	Դրսևորում են գործունակություն՝ նպատակներ դնելով, պատասխանատվություն ստանձնելով իրենց ուսումնառության համար և կիրառելով իրենց տրամադրված աջակցությունը, հարգում են բազմազանությունը, համագործակցում և ակտիվ մասնակցում կրթական գործընթացին:

Հավելված 4. Աջակցության կազմակերպման ընթացակարգ

Հավելված 4-ը ներկայացնում է աջակցության կազմակերպման ընթացակարգերի քայլաշար՝ սկսած ընդունելությունից մինչև բուն ուսումնական գործընթաց և գնահատում՝ սովորողին պատշաճ ուղղորդելու նպատակով:

4.1 Նախնական տվյալների հավաքագրում

Ընդունելության փուլում իրականացվող տեղեկատվության հավաքագրումը ծառայում է սովորողի հնարավոր կրթական աջակցության կարիքը նախնական

գնահատելու համար (սովորողի զարգացման առանձնահատկություններ, լեզվակրություն և այլն):

Նշված տեղեկությունների հիման վրա որոշում չի կայացվում. նպատակը հավասար մեկնարկ ապահովելն է (օրինակ՝ լեզվակրության առումով) և հետագայում՝ ուսումնական գործընթացում ժամանակին և նպատակային աջակցություն կազմակերպելը:

4.2 Բացահայտման մեխանիզմ

Սովորողի հետ կապված ցանկացած մտահոգություն կամ դժվարություն, որոնք հնարավոր աջակցման կազմակերպման հիմք են, կարող է բարձրաձայնվել՝

ուսուցչի,

մանկավարժի,

հոգեբանի,

ծնողի կողմից:

Սովորողի դժվարությունները և աջակցության կարիքը գնահատվում է աջակցող մասնագետների կողմից՝ մասնագիտական գործիքակազմով (հոգեբանական, լոգոպեդական, հատուկ մանկավարժական և այլն) տարեսկզբին՝ ընդհանուր հիմունքներով, տարվա ընթացքում՝ թիրախային և կարիքից ելնելով: Անհրաժեշտության դեպքում սովորողը կարող է ուղղորդվել արտաքին մասնագետների մոտ՝ ավելի նեղ և խորքային մասնագիտական հետազոտությունների համար:

Ներառական կրթության համակարգողը համակարգում է կարիքների գնահատման վերոնշյալ բոլոր արդյունքների միասնական հավաքագրման, վերլուծության և աջակցության մակարդակն ու ձևերը սահմանելու գործընթացները:

4.3 Աջակցության մակարդակների սահմանում

Աջակցությունը տրամադրվում է եռաստիճան համակարգով՝ RTI մոդելին համապատասխան.

Մակարդակ	Նկարագրություն	Օրինակներ
1-ին աստիճան՝ Համընդհանուր աջակցություն	Կիրառվում է բոլոր սովորողների նկատմամբ դասարանում	ՈՒՀՁ (UDL), տարբերակված ուսուցում (DI), ձևավորող գնահատում

2-րդ աստիճան՝ Թիրախային աջակցություն	Կարճաժամկետ, մասնակի դժվարությունների դեպքում	Փոքր խմբային աշխատանք, լեզվական աջակցություն (scaffolding)
3-րդ աստիճան՝ Ինտենսիվ աջակցություն	Երկարաժամկետ, արտահայտված դժվարությունների դեպքում	ԱՈւՊ/ԱՈւԾ, մասնագիտական աջակցություններ

4.4 Աջակցության պլանների մշակում (ԱՈւՊ/ԱՈւԾ)

ԱՈւՊ և ԱՈւԾ ները ներառում են՝

կոնկրետ և չափելի նպատակներ

հարմարեցումներ և միջամտություններ

պատասխանատու անձինք

դիտարկման և վերանայման ժամկետներ:

Մշակման գործընթացին մասնակցում են՝

Ներառական կրթության համակարգողը

Դասավանդող ուսուցիչները

Մանկավարժը

Հոգեբանը և/կամ այլ աջակցող մասնագետ

Ծնողը

Սովորողը՝ ըստ տարիքային համապատասխանության:

4.5 Մշտադիտարկում և վերանայում

Վերանայվում է ուսումնական տարվա ընթավքում առնվազն երկու անգամ

Փոփոխությունները կատարվում է տվյալահեն որոշումների հիման վրա

Արտահայտված առաջընթացի դեպքում աջակցությունը նվազեցվում է

Օժտվածության դրսևորումների դեպքում՝ աջակցությունը հարստացվում և ընդլայնվում է:

Աջակցության ավարտի կամ փոփոխման մասին որոշումը կայացնում է համագործակցային թիմը։

4.6 Գաղտնիություն և էթիկա

Բոլոր տվյալները.

պահվում են գաղտնիության երաշխիքներով

հասանելի են միայն իրավասու անձնակազմին

օգտագործվում են բացառապես երեխայի բարեկեցության և կրթական աջակցության նպատակով։

Աջակուցության կազմակերպման ընթացակարգերի համառոտ աղյուսակ

Փուլ	Գործողություն	Պատասխանատու	Արդյունք
1. Նախնական տեղեկատվություն	Նախկին դպրոցի փաստաթղթեր, լեզվի և կարողությունների վերաբերյալ տվյալների հավաքագրում	Ընդունելության աշխատանքների համակարգող	Սկզբնական ուսումնական պրոֆիլ
2. Դիտարկումներ դասարանում	Ուսուցչի գրառումներ ուշադրության, վարքի, առաջադիմության մասին	Ուսուցիչ	Հնարավոր դժվարությունների կամ կարողությունների վերաբերյալ նշումներ
3. Ներքին ուղղորդում	Լրացվում է սովորողի կարիքների բացահայտման հարցումը	Ուսուցիչ/խմբի մանկավարժ	Հավագրված բազա ՆԿ համակարգողի մոտ
4. Մասնագիտական գնահատում	Հոգեբանական կամ այլ մասնագիտական գնահատում ըստ	Մասնագետներ	Կարիքների հստակեցում

	անհրաժեշտության		
5. Աջակցության մակարդակի որոշում	RTA եռաստիճան մոդել	Համագործակցային թիմ	Աջակցության ձևաչափի ընտրություն
6. ԱՈՒԾ կամ ԱԱՊ մշակում	Նպատակներ, հարմարեցումներ, պատասխանատուներ, ժամկետներ	Համագործակցային թիմ	Հաստատված աջակցության պլան
7. Իրականացում և մշտադիտարկում	Աջակցության կազմակերպում և ընթացքի դիտարկում	Ուսուցիչներ, մասնագետներ	Կիրառված միջոցառումների վերլուծություն
8. Վերանայում	Առնվազն տարին 2 անգամ	Համագործակցային թիմ, ծնող	Աջակցության թարմացում/դադարեցում/հարստացում

Հավելված 5. Աջակցության անհատական պլանների նմուշներ

ԱՈՒԾ/ԱԱՊ-ները ապահովում են բոլոր սովորողների համար աջակցման գործընթացի թափանցիկությունը, հետևողականությունը և միասնական մոտեցում:

Անհատական ուսումնական ծրագիր (ԱՈՒԾ) կազմվում է այն սովորողների համար, ովքեր ունեն **երկարաժամկետ և կայուն աջակցման կարիք**:

Աջակցության անհատական պլան (ԱԱՊ)՝ այն սովորողների համար, ովքեր ունեն **կարճաժամկետ կամ միջին մակարդակի աջակցման կարիք**:

Աջակցության անհատական պլան

(Կարճաժամկետ/թիրախային աջակցություն)

Բաժին	**Նկարագրություն**

1. Ընդհանուր տվյալներ	Սովորողի անուն, դասարան, ծննդյան տարեթիվ, պատասխանատու մասնագետ
2. Դիտարկված կարիքներ	Ուսուցչի, հոգեբանի, ծնողի դիտարկումներ, ուսուցման/վարքային դժվարություններ կամ լեզվական կարիք
3. Նպատակներ (կարճաժամկետ)	Չափելի, իրագործելի, հստակ ձևակերպված նպատակներ՝ 1–3 ամսվա կտրվածքով
4. Աջակցման միջոցառումներ	Կիրառվող ռազմավարություններ, տարբերակված ուսուցում, հարմարեցումներ
5. Պատասխանատու անձիք	Ուսուցիչ, մասնագետ(ներ), ծնող
6. Մշտադիտարկում և արձանագրում	Առաջընթացի դիտարկում, հանդիպումների պարբերականություն
7. Վերանայման ամսաթիվ	Ամսաթիվ, արդյունքների ամփոփում, նոր քայլեր

Անհատական ուսումնական ծրագիր

(Երկարաժամկետ/ինտենսիվ աջակցություն)

Բաժին	**Նկարագրություն**
1. Սովորողի տվյալներ	Անուն, դասարան, տարիք, պատասխանատու մասնագետ
2. Սկզբնական գնահատում	Հոգեբանական, լեզվական, կրթական և վարքային գնահատումների համառոտ նկարագրություն
3. Անհատական երկարաժամկետ նպատակներ	1 կիսամյակի կամ ուսումնական տարվա տևողությամբ՝ ՈՒՀՁ/ՏՈՒ սկզբունքներին

	համահունչ
4. Կարճաժամկետ նպատակներ և չափելի ցուցանիշներ	Կոնկրետ և հասանելի արդյունքներ՝ ըստ ոլորտների (իմացական, սոցիալ-հուզական, լեզվական, վարքային)
5. Աջակցման միջոցառումներ և հարմարեցումներ	Աջակցության ձևեր դասարանում/ հարմարեցումներ գնահատման ընթացքում
6. Պատասխանատու մասնագետներ	Դասվար/մանկավարժ, ուսուցիչներ, հատուկ մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ, համակարգող
7. Համագործակցություն ընտանիքի հետ	Ծնողների պարտավորություններ, պարբերական տեղեկատվական հանդիպումներ
8. Մշտադիտարկում և պատասխանատվություն	Տվյալների հավաքագրում, դիտարկում, ուսուցիչների պարբերական զեկույցներ
9. Վերանայում և ճշգրտում	Տարեկան առնվազն 2 անգամ՝ արդյունքների ամփոփմամբ

Հավելում

Յուրաքանչյուր պլանի մշակմանը մասնակցում է համագործակցային թիմը, համաձայնեցվում է ծնողի հետ, հաստատվում է ներառական կրթության համակարգողի կողմից, դառնում է ուսումնական գործընթացի անբաժանելի գործիք: Մասնագիտական ախտորոշումները պահվում են գաղտնի՝ անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքի և մասնագիտական էթիկայի կանոնների համաձայն:

Հավելված 6. Գնահատման հարմարեցումների համառոտ նկարագիր

Շիրակացու ճեմարանում հարմարեցումները կիրառվում են գնահատման գործընթացին բոլոր սովորողների արդար և հավասար հասանելիությունը և

մասնակցությունը ապահովելու համար: Ճեմարանը առաջնորդվում է երկու հիմնական շրջանակներով.

ՀՀ կրթական հարմարեցումներ՝ հաստատված ԿԳՄՍ նախարարության կողմից

ՄԲ արտաքին գնահատումներում կիրառվող հարմարեցումներ (access arrangements) հաստատված Միջազգային բակալավրիատի կողմից:

Այս հավելվածը համադրում է երկու մոտեցումները հետևյալ կերպ:

ՄԲ արտաքին գնահատումներ՝ կիրառվում են միայն **IB Access Arrangements:**

ՀՀ պետական գնահատումներ՝ կիրառվում են միայն **ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարմարեցումներ:**

Դպրոցի ներքին գնահատումներ՝ կարող է կիրառվել ինտեգրված մոտեցում՝ ՀՀ և ՄԲ սկզբունքներով:

6.1 Հարմարեցումների կիրառման սկզբունքներ

Հարմարեցումները՝

ապահովում են արդարություն, հավասարություն, վավերականություն և հուսալիություն

վերացնում են խոչընդոտները, ոչ թե ստեղծում առավելություն

չեն փոխում ուսումնառության նպատակները կամ չափանիշները (անհրաժեշտության դեպքում միայն կիրառվում են մոդիֆիկացիաներ, այսինքն՝ ՀՀ պետական ԱՈՒՊ-ներում)

պարտադիր փաստաթղթավորվում են ԱՈՒԾ/ԱԱՊ-ներում

հաստատվում են՝
- ներքին գնահատումներում՝ ներառական կրթության համակարգողի կողմից

ՄԲ արտաքին գնահատումներում՝ ՄԲ-ի կողմից

ՀՀ գնահատումներում՝ պետական կարգավորումների համաձայն:

6.2 Հարմարեցումների համակցված աղյուսակ

Կատեգորիա	ՀՀ հարմարեցումներ	ՄԲ հարմարեցումներ	Դպրոցում կիրառություն ներքին և արտաքին գնահատումների ժամանակ
Ժամանակ և ժամանակացույց	Լրացուցիչ ժամանակ (25–50%), քննության բաժանում հատվածների, հանգստի ընդմիջումներ	Լրացուցիչ ժամանակ (25%/50%), հանգստի ընդմիջումներ	Ներքին՝ լրացուցիչ ժամանակ և ընդմիջումներ ԱՈՒՊ/ԱԱՊ-ի համաձայն Արտաքին՝ միայն ՄԲ-ի կողմից հաստատված։
Առաջադրանքի ներկայացում	Բանավոր և գրավոր հրահանգներ, պարզեցված ձևակերպումներ, տեսողական հուշումներ	Հստակեցված հրահանգներ, մեծացված տպագիր կամ այլ մատչելի ձևաչափ	Ներքին՝ կարելի է պարզեցնել ձևակերպումը՝ առանց բովանդակության փոփոխման։ Արտաքին՝ միայն ՄԲ-ի կողմից հաստատված։
Առաջադրանքին պատասխանելու ձև	Բանավոր պատասխան, գրառող (scribe), համակարգչի օգտագործում	Համակարգչի օգտագործում, գրառող (scribe)	Ներքին՝ սովորողը կարող է ընտրել պատասխանի ձևը ԱՈՒՊ/ԱԱՊ-ի համաձայն։ Արտաքին՝ միայն ՄԲ-ի կողմից հաստատված։
Կարդալու աջակցություն	Բարձրաձայն ընթերցում, աուդիո, գունային ֆիլտրեր, խոշորացնող սարքեր	Ընթերցող (reader), մեծ տառաչափ	Ներքին՝ կարող են կիրառվել ՀՀ-ում թույլատրելի բոլոր միջոցները։ Արտաքին՝ միայն ՄԲ-ի կողմից

			հաստատված։
Գրելու աջակցություն	Հարմարեցված գործիքներ, գրելու ձևանմուշներ, բանավոր ներկայացում	Համակարգչի օգտագործում, գրառող (scribe)	Ներքին՝ համակարգիչ կամ բանավոր ներկայացում ԱՈՒՊ/ԱԱՊ-ի համաձայն։ Արտաքին՝ միայն ՄԲ-ի կողմից հաստատված։
Մաթեմատիկայի աջակցություն	Վիզուալ հուշումներ, հաշվիչ՝ ըստ սահմանված կանոնների	Հաշվիչ՝ ըստ ՄԲ առարկայական կանոնների	Ներքին՝ վիզուալ հուշումներ և հաշվիչ ԱՈՒՊ/ԱԱՊ-ի համաձայն։ Արտաքին՝ ՄԲ սահմանած կարգով։
Վարքային և սոցիալ-հուզական աջակցություն	շարժողական ընդմիջումներ, ոչ խոսքային ազդանշաններ, ինքնակարգավորման ուղեկցում	Առանձին տարածք	Ներքին՝ կիրառվում են ՍՀԱ մոտեցումները։ Արտաքին՝ միջավայրի հարմարեցում։
Միջավայր և նստեցում	Հարմարեցված նստատեղ, առանձին սենյակ	Հարմարեցված նստատեղ, առանձին սենյակ	Ներքին՝ միջավայրի հարմարեցում։ Արտաքին՝ միայն ՄԲ-ի կողմից հաստատված։

Օժանդակ տեխնոլոգիաներ	Կապը, հաղորդակցությունը կամ ուսումնառության հասանելիությունը ապահովող սարքեր (հաղորդակցման հավելվածներ, էկրանային ընթերցիչներ, խոսք-գրություն ծրագրեր, լսողական սարքեր և այլն, օրինակ՝ «Գլոբուս», «Արև»)	Կապը, հաղորդակցությունը կամ ուսումնառության հասանելիությունը ապահովող սարքեր (հաղորդակցման հավելվածներ, էկրանային ընթերցիչներ, խոսք-գրություն ծրագրեր, լսողական սարքեր և այլն, որոնք հաստատված են IBIS համակարգում:	Ներքին՝ թույլատրվում են բոլոր անհրաժեշտ տեխնոլոգիաները: Արտաքին՝ միայն ՄԲ-ի կողմից հաստատված:
Այլընտրանքային գնահատման ձևեր	Պորտֆոլիո, նախագծային ներկայացումներ, պարզեցված ձևաչափեր	Թույլատրվում է միայն, եթե ուսումնական նպատակը չի փոխվում	Ներքին՝ հնարավոր է բանավոր/վիզուալ/ պրակտիկ գնահատում ԱՈՒՊ/ԱԱՊ-ի համաձայն: Արտաքին՝ գնահատման ձևաչափը չի փոխվում:

6.3 Դերերի բաշխումը հարմարեցումների կիրառման ընթացքում

Ուսուցիչներ – կիրառում են հարմարեցումները դասապրոցեսում և գնահատումների ժամանակ

Հոգեբաններ և այլ աջակցող մասնագետներ – տրամադրում են սովորողի առանձնահատկությունների և հատուկ կարիքների վերաբերյալ տվյալներ և առաջարկություններ, մոտեցումներ

Խմբի մանկավարժներ – Աջակցում են գործընթացի կազմակերպմանը

Տեսուչներ – կազմակերպում են հարմարեցումների կիրառումը գնահատման գործընթացում

Ներառական կրթության համակարգող – Համակարգում է գործընթացը, հաստատում է հարմարեցումները

Ծրագրերի համակարգողներ (MYP, DP) - կազմակերպում են ՄԲ հարմարեցումների հաստատումը արտաքին գնահատումների համար:

6.4 Փաստաթղթավորում և հաստատման գործընթաց

Խնդրի բարձրաձայնում (ուսուցիչ, ծնող, մասնագետ, սովորող)

Դեպքի քննարկում բազմամասնագիտական թիմում

ԱՈՒՊ/ԱԱՊ-ի կազմում և տրամադրում բոլոր ուսուցիչներին, սովորողի հետ աշխատող մասնագետներին

ՄԲ արտաքին գնահատումներ → հայտի և ապացույցների փաթեթի ներկայացում IBIS

ՀՀ գնահատումներ → պետական կարգավորումներով

Ներքին գնահատումներ → «Համակցված աղյուսակի» հիմքով

6.5 Քաղաքականությունների փոխկապակցվածություն

Գնահատման հարմարեցումները համահունչ են՝

Գնահատման քաղաքականությանը՝ արդարություն, հուսալիություն

Ակադեմիական ազնվության քաղաքականությանը՝ արդյունավետ և անաչառ գործընթաց

Լեզուների ուսուցման քաղաքականությանը՝ բազմալեզու սովորողների աջակցություն

Երեխաների պաշտպանության քաղաքականությանը՝ հոգեբանական անվտանգություն և ապահովություն

Ներառական կրթության քաղաքականությանը՝ հավասար մասնակցություն բոլոր սովորողների համար:

Հավելված 7. Վերանայման գործընթացներ

Հավելված 7-ը ներկայացնում է գործնական գործիքներ, որոնք նախատեսված են Շիրակացու ճեմարանում ներառական կրթության տարեկան վերանայումը համակարգված և հետևողական կազմակերպելու համար: Գործիքները հարմարեցված են մեծ անձնակազմ ունեցող կառույցի և բազմաշերտ կառավարման համակարգի համար և ապահովում են ներառական միջոցառումների միատեսակ կիրառում, մշտադիտարկում և բարելավում:

7.1 Ուսուցիչների տարեկան ինքնագնահատման

Նպատակ. Բոլոր ուսուցիչները տարին մեկ անգամ իրականացնում են ինքնագնահատումը: Այն նպաստում է անձնական մասնագիտական զարգացմանը, ինչպես նաև կարող է ծառայել ուսումնական գործընթացի իրականացման ներամբիոնային և համադպրոցական վերլուծությանը:

Ոլորտ	Ուղղորդող հարց	Արձանագրում (ուժեղ կողմեր / բարելավման ուղղություններ)	Ապացույցներ / Նշումներ
Դասի պլանավորում	Արդյո՞ք դասերը պլանավորելիս հաշվի եմ առել սովորողների առանձնահատկություններ ի և կարիքների բազմազանությունը (UDL, DI):		
Դասավանդում	Ի՞նչ փոփոխություններ և մեթոդներ եմ կիրառել՝ աջակցելու բազմազան առանձնահատկություններ և կարիքներ ունեցող սովորողներին (բազմալեզու, օժտված և այլն):		

Գնահատում	Արդյո՞ք հարմարեցումները կիրառել եմ արդար և հստակ՝ սահմանված կարգով:		
Համագործակցությունն	Ինչպե՞ս եմ համագործակցել մասնագետների հետ (հոգեբան, հատուկ մանկավարժ, լոգոպեդ, մանկավարժ):		
Ծնողների հետ կապ	Ինչպե՞ս եմ ներգրավել ծնողներին հետադարձ կապի և աջակցության ռազմավարությունների գործընթացում:		
Սովորողի գործունակություն	Ինչպե՞ս եմ խթանել սովորողների մասնակցությունն ու պատասխանատվությունը սեփական ուսումնառության նկատմամբ:		
Մասնագիտական աճ	Ներառական կրթության ինչպիսի՞ փորձառություն եմ ուզում զարգացնել առաջիկայում:		

7.2 Առաջնորդության տարեկան մշտադիտարկում

Նպատակ. Մանկավարժական առաջնորդության խորհրդի անդամները տարին մեկ անգամ իրականացնում են մշտադիտարկում: Այն ապահովում է հաշվետվողականություն և համակարգային պատկերացում ներառական կրթության կազմակերպմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին:

Ոլորտ	Ուղղորդող հարց	Գնահատում (1–5)	Մեկնաբանություններ / Ապացույցներ
Քաղաքականության իմացություն	Արդյոք անձնակազմը ծանո՞թ է Ներառական կրթության քաղաքականությանը և վերապատրաստվա՞ծ է դրա կիրառման համար:		
Դասալսումներ	Արդյոք դասավանդումը արտացոլու՞մ է ներառական կրթության մոտեցումները (UDL, DI, RTI):		
ԱՈՒՊ/ԱԱՊ-ի իրականացում	Արդյոք աջակցման միջոցառումները կիրառվում են հետևողականորեն և ամբողջական:		
Գնահատում	Արդյոք ՀՀ և ՄԲ հարմարեցումները կիրառվում են ճիշտ և կանոնակարգված:		
Համագործակցություն անձնակազմի միջև	Արդյոք առկա՞ է արդյունավետ համագործակցություն ուսուցիչների և մասնագետների միջև:		

Համագործակցություն ծնողների հետ	Արդյոք ծնողները ներգրավվա՞ծ են պլանավորման և հարմարեցումների մշակման գործընթացներում:		
Փաստաթղթավորում	Արդյոք ԱՈՒՊ/ԱԱՊ-ները և այլ գրառումները պատշաճ կերպով պահպանվում և թարմացվում են:		
Բարեկեցություն և հուզական միջավայր	Արդյոք տեսանելի՞ են սոցիալ-հուզական աջակցության մեխանիզմները դասասենյակներում:		

7.3 Վերանայման և հետադարձ կապի գործընթաց

Վերանայման գործընթացը, որը ենթադրում է կանոնավոր և փուլային վերահսկում, կազմակերպվում է հետևյալ հերթականությամբ.

Ուսուցիչները լրացնում են տարեկան ինքնագնահատման հարցումը:

Ամբիոնների ղեկավարներն ամփոփում են տվյալները և կազմում ամփոփ հաշվետվություն:

Ներառական կրթության համակարգողը վերլուծում է ամբողջ դպրոցի մակարդակով միտումները, մարտահրավերները և ներկայացնում բարելավման առաջարկություններ:

Մանկավարժական առաջնորդությունը քննարկում է առաջարկները, կայացնում որոշումներ և նախանշում գործողություններ:

Արդյունքները ներառվում են քաղաքականության տարին մեկ անգամ իրականացվող վերանայման գործընթացում:

7.4 Հաշվետվողականություն

Ներառական կրթության քաղաքականության արդյունավետ իրականացումը ենթադրում է հստակ պատասխանատվություն.

Ներառական կրթության համակարգողը համակարգում է վերանայման ամբողջ գործընթացը և հետևում ժամկետների պահպանմանը:

Ամբիոնների ղեկավարները պատասխանատու են ամբիոնի հաշվետվությունների որակի ու ամբողջականության համար:

Մանկավարժական առաջնորդությունը ապահովում է, որ առաջարկված քայլերը վերածվեն կոնկրետ գործողությունների ու տրամադրվեն համապատասխան ռեսուրսներ:

Արդյունքների հրապարակումը և փոփոխությունների վերաբերյալ ծանուցումը իրականացվում է թափանցիկ ձևով՝ ամրապնդելով վստահության և համագործակցության մշակույթը: